891·99·09
U-62

6 NOV 20

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՀԵՌԱՎՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՐԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ

91.99-09

ԳՈՒՐԳԵՆ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

(Քնարգրի իրավունքով)

ГОСБИБЛИОТЕКА ТССР
2231—3
891.99.09
Ա-62

Հրատարակություն Սովետական Լուսժողկոմատի
Բաքու 1939

881.99.09
13 FEB 2013

ԱՐԵՄՏԱՀԱՅ ՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

Արևմտահայ գրականության մեջ ռեալիստական ուղղությունը սկզբնավորվում է 19-րդ դարի 90-ական թվականների սկզբում։ Դա այն շրջանն էր, երբ Տաճկաստանում դեռ ուժեղ էին ֆեոդալական հարաբերությունները։ Չնայած նրան, որ կապիտալիզմն արդեն գոյություն ուներ արևմտահայ իրականության մեջ, բայց և այնպես պետական կառուցվածքը մնում էր նախկինը։ Բռնակալական պետական սիստեմի բազան հանդիսանում էր ֆեոդալական կալվածատիրական դասակարգը, որի հետ դաշնակցած էր խոշոր առևտրական բուրժուազիան։ Վերջինս թեպետ իշխող էր եկոնոմիկայի մեջ, բայց դեռ իր ձեռքն ամբողջապես չէր վերցրել պետական կառավարման մեքենան։ Տաճկահայ հասարակական կյանքը ֆոկուսի պես իր մեջ արտացոլում էր Կոստանդնուպոլիսը։ Կ. Պոլիսը լինելով յերկրի մայրաքաղաքը, հանդիսանում էր նաև կուլտուրական կենտրոն։ Դասակարգային հակամարտությունները և հակասությունները այդ խոշոր քաղաքում յերևան եյին գալիս ավելի ռելեֆ ձևով։ Ուշադրության արժանի յե Կ. Պոլիսը նաև նրանով, որ արևմտահայ համարյա բոլոր գրողներն իրենց ստեղծագործության մեծ մասի թեմատիկան վերցրել են Կ. Պոլիսի և նրա արվարձանների կյանքից։ Արևմտահայ վողջ սոցիալական-կուլտուրական և հոգևոր կյանքը նույնպես կենտրոնացած էր Կ. Պոլիսում։ Այդտեղ էր գտնվում հայ հասարակական կյանքի բարձրագույն հիմնարկներից մեկը՝ պատրիարքարանը, որը հանդիսանում էր հայ հասարակական կյանքի տնորենը։

Պատրիարքարանն էր, որ իր դիստանցիաներով (յերեցփոխական ժողով և այլն) ղեկավարում էր հայկական կյանքը՝ կուլտուրան, դպրոցական շինարարությունը, լուծում էր ընտանեկան վեճերը և այլ բազմաթիվ խնդիրներ։ Քաղաքականության մեջ պետականության դաշնակիցն էր և ժողովրդի շահագործման հիմնական ինստիտուտներից մեկը։ Պատրիարքարանի սոցիալական բազան

հանդիսանում էր ամիրայությունը։ Ամիրայությունը—դա այն դասն էր, որից առաջ էր գալիս օսմանյան կառավարության ծառայողների գլխավոր մասը։ Պետական կապալները, կաշառակերությունը, իր դիրքից ոգտվելը կազմում էր այդ խավի հարստության հիմքը։

Լինելով մեծ սեղանավորներ, թաղականներ և այլ պաշտոնների մեջ, ծայր աստիճան շահագործում էր քաղաքի արհեստավորությանը, մանր բուրժուական շերտերին, այսպես կոչված «եսնաֆ» խավին։ Ամիրայությանն, ինչպես հայտնի է, անխնա ծաղրել է «եսնաֆի» պաշտպան Հակոբ Պարոնյանը։

Ամիրայության կապը պետականության հետ չափազանց սերտ է յեղել։ Նրանցից մի քանիսը հասել էին ամենաբարձր պաշտոնների՝ տաճիկ կառավարության կոնսուլ ուրիշ յերկրներում, կամ մինիստր։ Արևմտահայ գրողների մոտ կարելի յե հանդիպել այնպիսի գիտողություններին, յերբ ամիրաներն ամենասերտ գործակցության մեջ էին փաշաների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ։ Այդ մասին ունեն մի շարք ակնարկներ Պարոնյանը, Գր. Զոհրապը և ուրիշները։ Հայ հասարակական կյանքում շահագործող և տիրապետող խավերն էին՝ ամիրայությունը, բարձր հոգևորականությունը և առևտրական բուրժուազիան։ Թե իրենից ինչ էր ներկայացնում ամիրայությունը, կարելի յե բերել Սարուխանի հետևյալ տողերը.—«ԺԹ դարի առաջին կեսին Կ. Պոլսի հայերի ազգային, հասարակական և մասամբ նաև կրոնական գործերի վրա իշխում էր ամիրայական դասակարգը, որը բաղկացած էր սեղանավորներից, մեծ վաճառականներից և պետական պաշտոնյաներից։ Նրանք էին վորոշում ոչ միայն ժողովրդի, այլ նույնիսկ պատրիարքարանի ճակատագիրը։ Իսկ ժողովուրդն ամիրաների հլու կամակատարն էր և միշտ խոնարհվում էր նրանց անձնական հեղինակության և տնտեսական ուժի առաջ»։ (Սարուխան.—«Օսմանյան հայերի ազգային սահմանադրությունը», տես «Արոր» ամսագիրը, 1910 թ. էջ 68)։

Յեվ այդ հլու խավը՝ «եսնաֆ» դասակարգը յերբեմն բունկվում էր ամիրայության դեմ։

Դարձյալ նույն Սարուխանը տալիս է հետևյալ փաստը.—«1838 թ. ամիրաների և սուլթանի դեմ կազմվեց եսնաֆից ահագին ցույց, բանտարկյալներին ազատեցին»։ (Նույն տեղը, էջ 69)։

Մյուս կողմից զարգացել էր հայկական խոշոր առևտրական բուրժուազիան, իսկ հետագայում ֆինանսական կապիտալը, պարազիտ՝ այսպես կոչված ռանտե բուրժուազիան։ Կապիտալի

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՊ-ԱՍՍ.СՍР
43498.63

նախնական կուտակման պրոցեսում և առևտրական բուրժուազիայի հետագա հեգեմոն դիրքով դասակարգային շերտավորումը գյուղում ավելի յե ուժեղանում։ Առաջ է գալիս գյուղացիների պաուպերիզացիան, վորոնք մի կտոր հացի համար թողնում էին գյուղը և վորպես մշակներ գալիս Պոլիս աշխատանք գտնելու։ Շահագործումը հասնում է ծայր աստիճանի, գյուղն սկսում է քայքայվել (հայ գրականության մեջ դրա մասին շատ է գրված. բավական է հիշել Գր. Զոհրապի, Վ. Փափազյանի և ուրիշների գործերը)։

Առևտրական բուրժուազիայի հարվածների տակ քայքայվում էր նաև Պոլսի մանր բուրժուազիան, «եսնաֆ» խավը, այն է՝ քաղաքի արհեստավորությունը և քաղաքային մանր բուրժուական ինտելիգենցիան։ Առևտրական բուրժուազիան գրավելով տիրապետող դիրք եկոնոմիկայի բնագավառում, միաժամանակ պահանջ էր առաջադրում վերափոխել պետական սիստեմը։

Լինելով դաշնակից օսմանյան կառավարության հետ, պետությունն ընդառաջեց բուրժուազիային։ Հետևանքը լինում է այն, վոր 1856 թ. կազմվում է Փարիզի դաշնագիրը՝ «թանզիմաթը», ըստ վորում քրիստոնյաներին տրվում են վորոշ բարենորոգումներ, իսկ 1860 թ. դոկտոր Ռոտինյանի ղեկավարությամբ կազմվում է «Ազգային սահմանադրությունը», որը Բ. Դռան կողմից հաստատվում է 1863 թ։ Այդ բարենորոգումները ժողովրդին վոչինչ չտվին և «եսնաֆի» պաշտպան Հ. Պարոնյանը, ինչպես գիտենք, սուր կերպով ծաղրել է վերոհիշյալ ռեֆորմները։ Այդ սահմանադրությունից ոգտվեցին տիրող խավերը, առաջին հերթին առևտրական բուրժուազիան։

Բուրժուազիայի տնտեսական տիրապետությամբ ստեղծվել էին համապատասխան հասարակական ինստիտուտներ։ Ստեղծվել էին նոր կենցաղ, մարդկանց նոր տիպեր, բուրժուական ընտանիք և ինտելիգենցիա։ Այդ ամենը հարկավոր էր վերարտադրել գրականության մեջ։ Ռոմանտիզմին այդ ուժերից վեր էր, նա չէր կարող կատարել հասարակական այդ պատվերը, նա արդեն իր դերը կատարել էր։

Անցյալ դարի 70—80 թ.թ. գրականության մեջ տիրապետող ուղղությունը ռոմանտիզմն էր արձակի մեջ՝ Ծերենց, Ս. Տյուսաբ, պոեզիայի մեջ Ալիշան, Պեշիքթաշլյան և ուրիշները։

Հասարակական նոր պահանջները կարող էր բավարարել միայն ռեալիզմը։

43498.63

Արևմտահայ ռեալիզմը գերազանցորեն առևտրական բուրժուազիայի գրական ուղղություն դարձավ։ Առաջ յեկան մի շարք գրողներ, ռեալիստ նովելլիստներ, այն է՝ Արփիար Արփիարյան, Գրիգոր Զոհրապ, Տիգրան Կամսարական և Զիֆթե-Սարաֆ։ Ռոմանտիզմին հաջորդում է ռեալիզմը։ Այդ նույն յերևույթն, ինչպես գիտենք, յեղել է նաև արևելահայ գրականության մեջ. Բաֆֆու և Պատկանյանի ռոմանտիզմին հաջորդեց Շիրվանզադեի և Նար-Դոսի ռեալիզմը։

Նովելլիստական գրականության մեջ ռեալիզմի սկզբնավորողը հանդիսանում է Արփիար Արփիարյանը։

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

Արփիարյանը բազմակողմանի գործիչ է յեղել։ Նա և՛ հրապարակախոս եր, և՛ քաղաքական գործիչ, և՛ միևնույն ժամանակ գեղարվեստագետ։

Այստեղ մեր նպատակը չէ խոսել Արփիարյանի մասին ընդհանրապես, այստեղ հիմնական խնդիրն Արփիարյանի գրական դեմքի պարզելն է։

Բայց նախ քան այդ, անհրաժեշտ է մի քանի խոսքով կանգ առնել Արփիարյանի վրա, որպես հասարակական և քաղաքական գործիչի։ Արփիարյանը գրական ասպարեզ է իջնում 1870 թվականներին որպես հրապարակախոս և հասարակական գործիչ։ Յեղել է բազմաթիվ թերթերի և ամսագրերի խմբագիր։ Իր բազմաթիվ հոդվածներում նա շոշափում եր այն ժամանակվա հուզող խնդիրները, կազմակերպում եր մարդկանց մտքերը, մի խոսքով հանդիսացել է արևմտահայ բուրժուազիայի առաջնորդներից մեկը։ Արփիարյանը հանդիսացել է հնչակյան կուսակցության ակնառու ներկայացուցիչներից մեկը և յեղել է առևտրական բուրժուազիայի իդեոլոգը։

Յեղել է Պոլսի մի շարք թերթերի խմբագիր։ Յերկար տարիներ խմբագրել է «Մասիս» թերթը (պատրիարքարանի որդանը), «Արևելք» թերթի խմբագիր, «Հայրենիք»-ի աշխատակից։ Արփիարյանը խմբագրել է «Նոր Կյանք» ամսագիրը, 1905 թ. յեղել է «Լուսաբեր»-ի խմբագիր Կահիրեյում հանդիսացել է «Շիրակ»-ի վոգին, Լոնդոնում յեղած ժամանակ հրատարակեց «Նոր Կյանք», «Մարտ», «Հայ հանդես» թերթերը։ Վորպես խմբագիր նա իր թերթերում տեղ է տվել և առաջ է քաշել հետագա մի շարք գրողների, ինչպիսիքն են՝ Գր. Զոհրապը, Տ. Կամսարականը և ուրիշները։

Արփիարյանի բազմաթիվ հոդվածները ցրված են տարբեր թերթերում, իսկ առանձին գրքով լույս չեն տեսել։ «Արևմտահայ հայոց արդի գրականությունը» խորագիրը կրող հոդվածի մեջ Արփիարյանն այդ խնդրին հետևյալ բացատրությունն է տալիս. «Բառորդ դարու մը ժամանակամիջոցին գիրքը Պոլսու մտավորական հրապարակին հետզհետե նահանջելով, հիմակ գրեթե անեւևույթացյալ մըն է։ Գրողները իրենց ապաստարանը որթերթին և պարբերականին մեջ փնտրեցին։ Ասոնք ալ թեև բազմակաշկանդ պրկյալներ են, բայց աճապարար հնարամտությամբ կը հաջողեն շարժման քիչ թե շատ դյուրություններ ձեռք բերել, վասնզի թյուրք կառավարության պաշտոնյաները կարող չեն չափազանցորեն ուշադիր ըլլալ հրատարակության, վորոնք վորոշյալ որեր և ժամեր պետք է վոր կանոնավորապես յերևին։ Սակայն գիրքն անբաստանյալ մըն է, զոր հարցաքննիչ դատավորը կրնայ ինչքան ատեն ուզե վար դնել ու յերկար բարակ պրպտել»։ («Բանբեր գրակ. և արվեստի». Պետերբուրգ, Ա. գիրք, 1903 թ. եջ 175)։

Արփիարյանի գեղարվեստական յերկերի մեծ մասը լույս են տեսել Ռուսաստանում։

Իր ազգային քաղաքական գործունեության համար 1890 թ. ձերբակալվում է կառավարության կողմից, սակայն շուտով ազատվում է, վորից հետո «Արևելք»-ի մեջ գրում է «մեղայագիր մը»։ Այդ առիթ տվեց դաշնակցությանը մեղադրելու Արփիարյանին իր դաղափարների դավաճանության մեջ։ Մի քանի անգամ կազմակերպվում է նրա դեմ տեռոր և վերջապես դաշնակներին հաջողվում է 1908 թ. սպանել Արփիարյանին Կահիրե քաղաքում։

Այս սպանությունն իրավունք չի տալիս մեզ ասելու, թե Արփիարյանը չի հանդիսացել մարտական բուրժուազիայի դաղափարախոսը։ Արփիարյանի և դաշնակցության միջև յեղած թշնամանքը տակտիկական բնույթի յեր, իսկ Արփիարյանի վոգի հասարակական և գրական գործունեությունը ցույց է տալիս, վոր նա յեղել է ազգայնական բուրժուազիայի արտահայտիչը։ Այդ յերևում է թեկուզ նրանից, կոր Արփիարյանը հանդիսացել է «Մշակ» թերթի ամենաակտիվ գործիչներից մեկը և վայելում եր Գր. Արծրունու հովանավորությունը։ Արփիարյանի նովելլաների առաջին ժողովածուն նվիրված է ազգայնական բուրժուազիայի հրապարակախոս Գր. Արծրունուն։

Արփիարյանը վորպես նովելլիստ գրականության մեջ հանդես

յեկավ 90-ական թվականների սկզբում։ Նրա պատմվածքների առաջին ժողովածուն «Նորավեպք» ընդհանուր խորագրի տակ լույս է տեսել 1885 թ., հետո գրում է «Խնդամոլիկ աղջիկը» վիպակը և վերջապես 1903 թ. լույս է տեսնում «Կարմիր ժամուց» վիպակը։ 1885 թ. լույս տեսած «Նորավեպք» ժողովածուն հանդիսացավ Արփիարյանի առաջին գրական-գեղարվեստական յերկը։ Մինչև այդ նա նովելներ չի գրել։ Դա նրա առաջին ստեղծագործությունն է։ Այդ ժողովածուի առթիվ Արփիարյանը գրում է. «Դու կը կարենաս սրտի վեպիկներ գրել, արի մեկ անգամ փորձիր»,—ասել էր նրան տիկին Արծրունին։ Յեվ Արփիարյանը ձեռնամուխ է լինում գրելու «սրտի վեպիկներ»։

«Նորավեպք» վերնագրի տակ վորպես յենթավերնագիր գրված է «Կյանքի պատկերներ»։ Այդ վերջինը և այն, վոր նա պիտի գրեր «սրտի վեպիկներ», արդեն ցույց են տալիս, վոր Արփիարյանը պիտի գրեր ժամանակակից խնդիրների մասին՝ շոշափելով բուրժուական ընտանիքի, ամուսնության և կնոջ դերի խնդիրները։

Ժամանակակից խնդիրների լուսաբանումը գրականության մեջ, այն ել որաթերթերի միջոցով, պահանջում է գրվածքի համապատասխան ծավալ։ Շատ հասկանալի յե, վոր որաթերթն իր սուղ եջերով կարող եր տեղավորել փոքր գրվածքներ, քան թե լայնածավալ վեպ։ Այդ ստեղծում է այն նախադրյալները, վոր արևմտահայ գրականության մեջ զարգանում է եպիկական տեսակի փոքր ժանրը՝ նովելան, վորն արևմտահայ գրականության մեջ կոչվում է նաև նորավեպ։ Յեվ մենք տեսնում ենք, վոր արևմտահայ ռեալիստական գրականության մեջ գերազանցորեն զարգանում է նովելան, վորն իր գագաթնակետին է հասնում Գր. Զոհրապի մոտ։

Արփիարյանն իր նովելլաների ժողովածույով հանդիսացավ նովելլայի հիմնադիրն արևմտահայ գրականության մեջ։ «Նորավեպք» ժողովածուի մեջ ամփոփված են չորս նովելլա՝ «Դատապարտյալը», «Յերազի մը գինը», «Կատակ մը» և «Ապուշը»։

Բոլոր նովելլաներն ել շոշափում են համարյա թե նույն թեման՝ ընտանիքի, ամուսնության, կնոջ և դաստիարակության խնդիրները։ Այդ նովելլաներում Արփիարյանը դնում է կնոջ եմանսիպացիայի խնդիրը, նրա իրավունքների ճանաչման խնդիրը, սակայն Արփիարյանը կնոջ սոցիալական ազատագրության խնդիրը չի դնում, այլ պաշտպանում է միայն կնոջ ձևական իրավական ազատությունը։ Այս խնդրում Արփիարյանն

ամբողջապես հետևել է Գր. Արծրունուն և բազմաթիվ խնդիրներում նրանք քայլում են համաքայլ։ Արփիարյանի կապը Արծրունու հրապարակախոսության հետ անժխտելի յե։ Նովելլաների մեջ դնելով կնոջ ձևական ազատության խնդիրը, հեղինակն այդ լուծում է յելնելով տարբեր տեսանկյուններից։

«Դատապարտյալը» նովելլայի մեջ հիմնական թեման ապահարզանի խնդիրն է, վորը հանդիսանում է կնոջ կաշկանդման միջոցներից մեկը։ Ապահարզանի խնդիրը վերոհիշյալ գործի հերոսուհի Սաթենիկին հասցնում է այն դրության, վոր նա չի կարողանում միանգամայն ազատվել իր նախկին ամուսնուց, վորի հետ ամուսնացել է իր կամքից անկախ՝ փողի ուժի հետևանքով։ Մյուս կողմից կապվելով իր սիրածի հետ՝ այդ կապը ստանում է վոչ որինավոր բնույթ, քանի վոր կենդանի յե Սաթենիկի ամուսինը։ Կինը լինելով հավիտենապես իր ամուսնու սորուկը, ստեղծվում է վողբալի վիճակ Սաթենիկի համար։ Նա յենթարկվում է պարսավանքի շրջապատի կողմից, բոլորը խորշում են նրանից։ Սաթենիկը չի կարողանում տանել այդ անպատվությունը և մեռնում է սրտի կսկծից։ Յեկեղեցին մերժում է նրան թաղելուց։ Շնորհիվ իր ռեալիստական մեթոդի Արփիարյանը կարողացել է ճիշտ կերպով նկատել կյանքի մի շարք կողմերը և պատկերել այդ։ Կնոջ սորկական վիճակը կապիտալիստական հասարակության մեջ, ամուսնության մեջ փողի հսկայական նշանակությունը և ամենակարող ուժը, բուրժուական հասարակության և յեկեղեցու կեղծիքի ու կեղծ բարեպաշտության մերկացումը վերոհիշյալ նովելլան դարձնում են Արփիարյանի հաջողված գործերից մեկը։

Կնոջ հասարակական սորկությունը և բուրժուական ընտանիքի այլանդակությունը պատկերված է «Յերազի մը գինը» նովելլայում։ Դասակարգային ներհակությունն այստեղ ավելի տպավորիչ է։ Աղքատ զրագիրը չի կարողանում ամուսնանալ իր սիրած Սոֆիկի հետ, վորովհետև չունի փող։

Սոֆիկն ամուսնանում է հայտնի հարուստ Հակոբիկ աղայի հետ։ Հակոբիկ աղան տիրում է Սոֆիկին, վորովհետև ունի փող, ունի հարստություն։ Նովելլայի հանգույցը լուծվում է նրանով, վոր աղքատի կառքը դիակի հետ միասին հանդիպում է հարստի հարսանյաց կառքին, վորի մեջ բազմած են կյանքի ընտրյալները։ Մի բևեռում աղքատություն ու մահ, մյուսում՝ հարստություն և կյանք։

Հաջորդ նովելլայում, վորը կոչվում է «Կատակ մը», Արփիարյանը հաջողությամբ պատկերում է հարուստ ընտանիքի յերի-

տասարդ մարդու ապականությունը, վորն իր կրքերին զոհ է դարձնում խեղճ ու աղքատ աղջկան։ Համառոտ սյուժեան այս է։ Զկնորս Նիկողոս աղայի ընտանիքը քայքայվում է։ Մեռնում են Նիկողոս աղայի կինը և տղան։ Կենդանի յե մնում միայն իր թոռը՝ մի փոքրիկ աղջիկ։ Մաքրիկը մի կտոր հաց վաստակելու համար գործի յե մտնում Գրիգոր եֆենդու տունը։ Վերջինիս տղան՝ հարուստ և անհոգ Վահրամը խաբում է Մաքրիկին, թե կամուսնանա նրա հետ և զրկում է Մաքրիկին կուսությունից։ Հետո լքում է նրան և ամուսնանում մի հարուստ, ոժիտավոր որիորդի հետ։ Մաքրիկի դառն կշտամբանքին Վահրամը պատասխանում է.—«Ե՛հ անոնք կատակ էյին, մենք անանկ կատակներ շատ կընենք, Մաքրիկս»։ Աղջիկը չկարողանալով տանել այդ անպատվությունը, իրեն գցում է ծովը։

Արփիարյանը հաջողությամբ կարողացել է տալ հարուստ յերիտասարդի ցոփ կյանքը և բուրժուական ընտանիքի նեխվածությունը։ Այդ նովելլան աչքի յե ընկնում դառն իրոնիայով՝ ուղղված հարուստ խավի դեմ։ Արփիարյանի համակրանքն աղքատ Մաքրիկի կողմն է։ Սակայն Արփիարյանը դրանից արմատական հետևություններ չի անում, նա պահանջում է միայն, վոր հարուստները մարդավայել վերաբերմունք ունենան դեպի աղքատ մարդիկ։ Արփիարյանը յերևան է գալիս սոսկ վորպես ռեֆորմատոր, վորպես բուրժուական բարոյախոս։

Վերջին նովելլան է «Ապուշը»։ Այստեղ հեղինակը պատկերում է կնոջ վատ դաստիարակությունը և դրա հետևանքով ստեղծված չարաբաստիկ հետևանքները։ Կենտրոնական տիպը Ֆորայունեն է. մի անմիտ, դոռող և շվայտ կին։ Նա ցանկանում է անպայման ամուսնանալ հարուստ Սինայանց Մկրտչի հետ, սակայն նրան այդ չի հաջողվում և նա ստիպված ամուսնանում է Լևոնի հետ, վորն ապրում է իր համեստ աշխատանքով։ Ամուսնությունից հետո Ֆորայունեն սկսում է դավաճանել իր ամուսնուն և հեշտանքի ժամեր է անցկացնում Սինայանց Մկրտչի հետ։ Այդ տեսնում է Լևոնը և հուսահատությունից խելագարվում։

Ֆորայունեն յերևան է գալիս վորպես դատարկամիտ կին։ Նա միայն յերազում է ճոխ հագուստների և շքեղ կառքերի մասին։ Ուրիշների մոտ իր հարազատ մորը չի ուզում ճանաչել, վորովհետև մայրը վատ է հագնված։ Այստեղ Արփիարյանը տալիս է բուրժուական կնոջ բարքերի քայքայումը և դրա սոսկալի հետևանքները։ Արփիարյանի վերոհիշյալ գործերը հանդիսանում են ռեալիստական նովելլաներ։ Պատկերներն իրական են և համոզիչ։ Նա կարողանում է ստեղծել լարված սիտուացիաներ և հետաքրքիր հանգույցներ։ Արփիարյանը հաջողությամբ կարողանում է կիրառել կոնտրաստային տիպերը, վորի հետևանքով առավել տպավորիչ է դառնում նովելլան։ (Որինակ՝ «Յերազի մը գինը» նովելլան)։

Ինչպես տեսանք, վերոհիշյալ նովելլաներում հիմնական թեման—դա բուրժուական ընտանիքի և կնոջ ձևական ազատագրման խնդրի պատկերն է։ Արփիարյանը սովորական տիպի բուրժուական բարոյախոս է։ Յեվ յեթե նա տալիս է բուրժուական վերնախավի քննադատությունը, ապա այդ նա անում է ուղղելու իմաստով։ Արփիարյանի մոտ բացակայում է բուրժուական հասարակության վոչնչացնող քննադատությունը, ընդհակառակը, «Կատակ մը» նովելլայում Վահրամի հայրը՝ Գրիգոր եֆենդին հարուստ է, բարերար, վողորմած և աստվածապաշտ։ Վահրամի քույրը նույնպես բարի յե և ոգնում է Մաքրիկին։ Նույնպիսի համակրանքով և խոսում Արփիարյանը Սինայանց հարուստ ընտանիքի մասին. նրանք նույնպես բարերարներ են և ոգնում են աղքատներին («Ապուշը» նովելլան)։ Այս որինակները ցույց են տալիս, վոր Արփիարյանը չի ժխտում բուրժուական հասարակությունը, չարիքը տեսնում է վոչ թե այդ հասարակության բնույթի մեջ, այլ այդ նա տեսնում է անհատ վատ մարդկանց մեջ, վորոնց հարկավոր է ուղղել և ուրիշ վոչինչ։ Վերոհիշյալ նովելլաներում Արփիարյանը չի տալիս կնոջ տնտեսական անկախության խնդրի լուծումը։ Նույնպես չի լուծում կնոջ քաղաքական ազատության խնդիրը։ Արփիարյանը պահանջում է միայն, վոր կինն ազատ լինի իր ներքին խնդիրներում, այն է՝ սիրո բնագավառում, այսինքն Արփիարյանը հանդիսացավ միայն բուրժուական կնոջ պահանջի արձանագրողը։ Արփիարյանը լուծում է միայն այն խնդիրները, վոր վաղուց լուծել է յեվրոպական բուրժուազիան։ Արփիարյանը կրկնել է այն, ինչ վոր արծարծել է արևելահայերի մեջ Գր. Արծրունու «Մշակ» թերթը։ Գեղարվեստական արժեքի տեսակետից այդ նովելլաներն ունենալով մի շարք դրական կողմեր, ունեն նաև իրենց թերությունները։ Այդ թերությունները հատկապես յերևան են գալիս հանգույցների լուծման մեջ։

Բոլոր դեպքերում հանգույցները համարյա նույն լուծումն ունեն, այն է. տուժածները բոլորը մեռնում են. Սաթենիկը («Դատապարտյալը») մեռնում է թոքախտից, Հրանտը («Յերազի մը գինը») նույնպես մեռնում է թոքախտից, Մաքրիկը («Կատակ մը») ինքնասպան է լինում, իսկ Լևոնը խելագարվում է, այսինքն նույնպես մեռնում է, բայց հոգեպես։

Նար-Դոսի հերոսներն էլ նույն վախճանն են ունենում։ Բայց այդ յելքը գեղարվեստականորեն պատճառաբանվում է և համոզեցուցիչ է Նար-Դոսի մոտ։ Չնայած այդ հիմնական թերությանը՝ Արփիարյանի վերոհիշյալ նովելները հաջողված գործեր են։

Այդ նովելներով նա ռեալիստական նովելայի հիմքը դրեց արևմտահայ գրականության մեջ։ Գրված են Արփիարյանի լեզվին հատուկ հումորով և սեղմ՝ լակոնական վոճով։

Արփիարյանն իր այդ նովելներով ուժեղ ազդեցություն է թողել հետագա նովելիստների վրա։ Այդ ազդեցությունը հատկապես յերևան է գալիս խոշորագույն նովելիստ Գր. Զոհրապի մոտ։ Արփիարյանը գրել է նաև պատմվածքներ արհեստավորների կյանքից։ Այդ բնույթի գործերից հատկապես արժեքավոր է «Խնդամոլիկ աղջիկը» պատմվածքը։ Առաջին անգամ վորպես պատմվածք «Խնդամոլիկ աղջիկը» լույս է տեսնում «Մշակ» թերթում 1885 թվին։ Հետագայում այդ գործը վերամշակվում է և 1904 թվին լույս է տեսնում վորպես վիպակ։ Համառոտ բովանդակությունն այս է. Ղուկաս աղան տասը տարվա գրաշար է և ապրում է նյութական դրկանքների մեջ։ Նա խնամում է իր յեղբոր վորբ աղջկան՝ Արմիկին, վորին հարկավոր է ամուսնացնել։ Արմիկի ամուսնական ծախքերի համար նա դիմում է տպարանատիրոջ ոգնության, իսկ վերջինս Ղուկաս աղային հեռացնում է տպարանից, վորպես իր գործին չհամապատասխանող և աշխատանքի անընդունակ։ Կարիքից ստիպված՝ նա սկսում է ծախսել յերկաթուղային այն արժեթղթերը, վոր ժառանգել եր Արմիկի հորից և վոր պիտի տրվեր փեսային վորպես ոժիտ։ Այդ իմանում է Արմիկի նշանածը՝ Արթակը և հրաժարվում է ամուսնությունից։ Արմիկը չի կարողանում տանել այդ անպատվությունը և միշտ խնդամոլիկ աղջիկը դառնում է մտածկոտ և անընդհատ հյուծվում է։ Վիպակի հերոսուհին ունենում է այն վախճանը, ինչ վախճան վոր ունեցել են նորավեպի հերոսուհիները, այսինքն մեռնում է թոքախտից։ Այստեղ ևս հիմնականը՝ կնոջ խնդիրն է, այստեղ ևս Արփիարյանը դնում է մաքուր, անկեղծ սիրո խնդիրը. այն սիրո, վորը հիմնված չլինի վողի վրա։ Բայց այս վիպակը նովելներից առավել ևս արժեքավոր է իր սոցիալական մի շարք խնդիրների ընդգրկումով։ Առաջին անգամ արևմտահայ գրականության մեջ Արփիարյանն այսպես թե այնպես պատկերում է գրաշարների կյանքը, նրանց տնտեսական խախուտ վիճակը։ Ղուկաս աղան հին գրաշար է, բայց վերջը

մնում է անգործ։ Այստեղ Արփիարյանը կարողացել է տեսնել և վերարտադրել բուրժուական հասարակության հիմնական չարիքներից մեկը՝ գործազրկությունը և դրա սոսկալի հետևանքներն արհեստավորության համար։

Ղուկաս աղան մնում է անգործ և փոխանակ չարիքի դեմ պայքարելու, իր վիշտը մոռանալու համար սկսում է խմել ողի։ Կարիքը, Ղուկաս աղայի ծանր վիճակը հեղինակը կարողացել է նկարագրել մեծ հուզականությամբ։ Արփիարյանի այս պատմվածքի մեջ ուժեղ են լիրիկական տարրերը։ «Խնդամոլիկ աղջիկը» վիպակի մյուս արժանիքը կայանում է նրանում, վոր Արփիարյանը թեև թույլ, բայց տալիս է գրաշարների կազմակերպվածությունն անգործության դեմ պայքարելու համար։ Նրանք ցանկանում են հիմնել գրաշարների ընկերություն և տպարան, հավաքում են փող իրենց անգործ ընկերոջ՝ Ղուկաս աղային ոգնելու համար։

Շահագործողների հանդեպ գրաշարները հլու և հնազանդ չեն, նրանք յելնում են տարերային պայքարի։

Յերիտասարդ գրաշար Արտաշեսը կապիտալիստների մասին ասում է.—«Կապիտալիստները գող են, մեր տառապանքների պատճառը կապիտալիստներն են և կապիտալը»։ Արտաշեսը գրաշարների մեջ ցրում է ինչ վոր թռուցիկներ։ Դրանց բովանդակությունը մնում է անհայտ, վորովհետև վիպակի մեջ այդ կողմը պատկերացում չի ստացել և այդտեղ վերջանում է վիպակը։ Թեմատիկայի տեսակետից այդ գործն ավելի արժեքավոր է, քան թե Արփիարյանի նախորդ նովելները, սակայն վորպես գեղարվեստական գործ «Խնդամոլիկ աղջիկը» համեմատած նովելների հետ ավելի թույլ է։ Գործողություններն իրար հետ չեն կապակցված. կոմպոզիցիան հաճախ յերևան է գալիս վոչ միասնական և ամբողջական, ստացվում է այնպես, վոր այդ գործը յերկու տարբեր պատմվածքների տպավորություն է թողնում, վոր միացրել է մեխանիկորեն, առանց ներքին անհրաժեշտության։ Որինակ՝ Արմիկի և Սաթենիկի ինտրիգան առանձին պատմվածք է, իսկ Ղուկաս աղայի և իր գրաշար ընկերների գործն առանձին մաս է, վորն որգանապես չի շաղկապվում վիպակի առաջին մասի հետ։ Այս գործն արժեքավոր է նրանով, վոր ցույց է տալիս Արփիարյանի աշխարհայացքի մեջ յեղած յերբեմնի ռադիկալ կողմերը։ Նա հանդիսացել է բուրժուազիայի գաղափարախոսը, բայց շնորհիվ քննադատական ռեալիզմին կարողացել է վորոշ դեպքերում ճիշտ կերպով դիտել կյանքը և տալ այդ իր գործերի մեջ։

Արփիարյանի հաջորդ գործը հանդիսանում է «Կարմիր ժամուց» վիպակը, որի մեջ միանգամայն պարզ ձևով յերևան է գալիս Արփիարյանի բուրժուական ազգայնական գաղափարախոսությունը։ Առաջին անգամ այդ վիպակը լույս է տեսել 1903 թ., «Բանբեր գրականության և արվեստի» մեջ։

«Կարմիր ժամուց» գործի մեջ Արփիարյանի նացիոնալիզմը յերևան է գալիս իր վողջ մերկությամբ։ Այս գործը ցույց է տալիս, որ Արփիարյանը հանդիսացել է բուրժուական լիբերալիզմի՝ Գրիգոր Արծրունու հետևողական հետևորդն արևմտահայ գրականության մեջ։ Վիպակի գլխավոր հերոսը տեր-Հուսիկն է, որն առաջ կոչվելիս է յեղել Գաբրիել։ Փոքր հասակում դաստիարակվել է բողոքական վարժապետ Արշամի մոտ, որը հանդիսանում եր ազգայնական շարժման կազմակերպիչներից մեկը։ Տեր-Հուսիկը Տոմուզ գյուղում կազմակերպում է հայդուկային խումբ և յերիտասարդներին զինում է հրացաններով։

Ազգայնական շարժմանն ավելի մեծ ծավալ տալու համար տեր-Հուսիկը գալիս է Կ. Պոլիս և իր քարոզներով սերմանում է ազգային թշնամանք։ Նրա հետ ընդհարվում է թաղի մեծավորն՝ ամիրա Հայրապետ եֆենդին, որը պահանջում եր տեր-Հուսիկից դադարեցնել այդ տեսակի քարոզները և լինել ավելի չափավոր։

Տեր-Հուսիկը շարունակում է իր քարոզները և վերջը ձերբակալվում է կառավարության կողմից։

Այս գրվածքը նացիոնալիստական գործ է։ Արփիարյանը գրում է, որ արևմտահայերի ծրագիրը պետք է հանդիսանա Րաֆֆու «Խենթը»։ Տեր-Հուսիկն իր քարոզների մեջ առաջնորդվում է Րաֆֆու գաղափարներով։ Արփիարյանի «Կարմիր ժամուցը» բաֆֆիական ազգայնական տենդենցով հորինված մի վիպակ է։ Չափավոր Հայրապետ եֆենդին վերջում հրաժարվում է իր գաղափարներից և համբուրում է տեր-Հուսիկի աչը։ Նվիրում է տեր-Հուսիկին մի քանի վոսկի և ասում. «Ժողովրդի համար վառող, հրացան գնե—աս կարմիր ժամուց է»։ Յեվ այդպես հաղթանակում են տեր-Հուսիկի գաղափարները, այլ խոսքով ասած հաղթանակում են Րաֆֆու ազգայնական տենդենցները։

Սա է Արփիարյանի «Կարմիր ժամուց» գրվածքի իդեան։

Վերոհիշյալ գրվածքով Արփիարյանը նոր խոսք չասաց գրականության մեջ, այլ ամբողջապես և նույնությամբ կրկնել է Րաֆֆուն։

Արփիարյանի «Կարմիր ժամուց» գործը Րաֆֆու «Ջալալեդդին» գործի պատճենն է։ Տեր-Հուսիկը պահանջում է, որ յեկեղեցին ծառայի ազգայնականության շահերին, որ յեկեղեցում խունկ վառելու փոխարեն հարկավոր է պատրաստել հրանոթներ և վառոդ։

Դժվար չի նկատել, որ տեր-Հուսիկը Րաֆֆու Դալի-Բաբայի յերկվորյակն է։

«Կարմիր ժամուցը» լինելով ազգայնական գրվածք, Րաֆֆու նման Արփիարյանն իրականությունը զոհել է իր գաղափարներին։ Դրա հետևանքով Արփիարյանի այս գրվածքի մեջ ռեալիզմը չափազանց միակողմանի յե և ճիշտ կերպով չի վերարտադրում իրերի դրությունը։ Հետևելով Րաֆֆուն, Արփիարյանը ևս դնում է հայերի միասնության խնդիրն առանց դասակարգային խարության։ Այդ միասնությունը պետք է կատարվի բուրժուազիայի հեգեմոնիայի տակ, վերջինիս տիրապետությունն ապահովելու համար։ Արփիարյանը չի տեսնում նույն ազգի մեջ յեղած տարբեր դասակարգերի պայքարը։ Հանուն նացիոնալիզմի Արփիարյանը զոհում է ճշմարտականությունը։

Յեթե 1885 թվին գրված «Խնդամոլիկ աղջիկ» վիպակի մեջ Արփիարյանը տեսնում եր դասակարգային հակամարտություն, հայ գրաշարի կեղեքումը հայ կապիտալիստի ձեռքով, ապա 1903 թ. գրված «Կարմիր ժամուց» գործում արդեն հրաժարվում է դրանից, փախչում է իր սեփական դասակարգին քննադատելուց։

Այս արդեն ցույց է տալիս Արփիարյանի ռեալիզմի անհետևողականությունը, նրա ռեալիստական մեթոդի խախուտ հիմքերը։

Վորպես ռեալիստական նովելլայի ներկայացուցիչ Արփիարյանից անհամեմատ ավելի բարձր է կանգնած արևմտահայ ռեալիստական արձակի մյուս խոշոր ներկայացուցիչը՝ Գրիգոր Զոհրապը։

2. ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

Արփիար Արփիարյանը խոսելով արևմտահայ գրականության մասին իր հոդվածներից մեկում գրում է. «Հայկական նոր գրականությունը յերկու գաղթավայրի մեջ ծնավ ու կբարգավաճի. Պոլիս և Իզմիր»։ Գրականությունը զարգանալով Պոլսում և Իզմիրում, որտեղ կենտրոնացած եր առևտրական բուրժուազիան, իր հերթին նպաստեց նովելլայի զարգացմանը։

Առևտրական բուրժուազիայի զարգացումով, արևմտահայ իրականության մեջ կատարվեցին մեծ տեղաշարժեր։ Կիսաֆեոդալական և նահապետական պարզ հարաբերությունները տեղի չեն տալիս կապիտալիզմին։

Կյանքն ավելի բարդանում և կտրատվում է բազմաթիվ մասնիկների, ստանում է բազմաթիվ յերանգավորումներ։ Ստեղծվում են հասարակական բազմաթիվ նոր նորմաներ։ Այդ ամենը ստեղծեց և կյանքի կոչեց հասարակական կյանքի զարգացումը։ Նոր յերևույթներն առևտրական բուրժուազիայի առաջ հրամայաբար պահանջ են դնում ունենալ իր ոպերատիվ, ճկուն, բոլոր յերևույթներին անմիջապես արձագանքող գրականություն։ Այդ պահանջն առաջին հերթին կարող եյին բավարարել փոքր պատմվածքները՝ նովելլանները, վորոնք իրենց ճկունությամբ և բազմաթիվ մանր յերևույթների, կյանքի բազմաթիվ և տարբեր անկյունների ընդգրկումով անհամեմատ մեծ առավելություններ ունեն, քան, դիցուք, վեպը, վորը պահանջում է ավելի դանդաղկոտություն, գրելու յերկար ժամանակ և ավելի քիչ է ոպերատիվ, քան թե նովելլան։

Այս հանգամանքը հանդիսացավ հիմնական պատճառներից մեկը, վորպեսզի արևմտահայ գրականության մեջ զարգանա նովելլան։ Նովելլան դարձավ զարգացող առևտրական բուրժուազիայի շահերի ոպերատիվ արտահայտիչը գրականության մեջ։

Խոսելով 19-րդ դարի 30—40-ական թվականների նովելլայի զարգացման պատճառների մասին Ռուսաստանում, Բելինսկին իր «Ռուսական պատմվածքի և Գոգոլի պատմվածքների մասին» հոդվածում գրում է.—«Մենք գործարար մարդիկ ենք, մենք անընդհատ վորոնումների մեջ ենք, մենք մտահոգված ենք, մենք թանդ ենք դնահատում ժամանակը, մենք չունենք ժամանակ կարդալու մեծ և յերկար գրքեր,—մի խոսքով մեզ անհրաժեշտ է պատմվածք (նովելլա—Գ. Անտոնյան)։ Մեր ժամանակակից կյանքը չափազանց բազմազան է, բարդ է և կտրտված, մենք ցանկանում ենք, վոր նա արտացոլի պոեզիայի մեջ ինչպես հախճապակյա անոթի մեջ—միլիոն անգամ կրկնված, բայց հնարավոր որբաղներով—և պահանջում ենք պատմվածք։ Կան դեպքեր, կան հանգամանքներ, վորոնք այսպես կոչված չեյին բավականացնի դրամային կամ վեպին, բայց վորոնք խոր են, վորոնք մի ակնթարթում կենտրոնացնում են այնքան կյանք, վորքան չի կարելի սպառել նրան դարերի ընթացքում։ Պատմվածքը բռնում է նրանց և պարփակում է իր նեղ շրջանակի մեջ։ Նրա ձևը կարող է իր մեջ տեղավորել ինչ վոր ուզեք. յեվ բարքերի թեթև ոչերկ, յեվ սարկաստիկ սուր ծաղր մարդկանց ու հասարակության վրա, յեվ հոգու խոր խորհրդավորություն, յեվ կրքերի դաժան խաղ։ Կարճ և արագ, թեթև և խոր միասին վերցրած, նա թռչում է մի իրից մյուսը, կտրատում է կյանքը մասնիկների և պոկում է թերթիկներ այս կյանքի մեծ գրքից։ Միացրեք այդ թերթիկները մի կազմի մեջ և կստացվի Ֆենչպիսի լայնածավալ գիրք, Ֆենչպիսի լայնածավալ վեպ... Վեպը և պատմվածքը եյությամբ նույն տեսակի յեն, վորոնք յերևան են յեկել մեր գրականության մեջ վոչ այնքան վոգու և ընդորինակության հետևանքով, վորքան պահանջի հետևանքով»։

Բելինսկու այս տողերը հնարավորություն են տալիս մեզ պարզելու նովելլայի զարգացման պատճառներն արևմտահայ գրականության մեջ։

Գրիգոր Զոհրապն արևմտահայ գրականության և ընդհանրապես հայ գրականության մեջ յերևան է գալիս, վորպես կլասիկ նովելլիստ։ Գրական այդ ժանրը նա զարգացրեց և հասցրեց բարձր աստիճանի։ Վորպես նովելլիստ Զոհրապը մնում է չգերազանցված հեղինակ։

Նա գրական ասպարեզ է իջել 19-րդ դարի 90-ական թվականների վերջին։

Զոհրապի առաջին նովելլան տպվել է 1888 թվին «Մասիս» թերթում և կոչվում է «Ներսես»։ Նույն թվին, նույն թերթում տպվել են «Այրին» և մի շարք այլ նովելլաներ, իսկ 1890 թվին «Խարիսխ» և «Մեղա տեր» նովելլանները։

Գրիգոր Զոհրապի նովելլաները լույս են տեսել յերեք ժողովածույով. դրանք են՝ «Լուռ ցավեր», «Խղճմտանքի ձայներ» և «Կյանքը ինչպես վոր է», բոլորն էլ լույս են տեսել Պոլսում 1911 թվին։ Այդ ժողովածուներից դուրս են մնացել մի շարք նովելլաներ, վորոնք իրենց սոցիալական և գեղարվեստական կողմով մի առանձին արժեք չեն ներկայացնում։

Մինչև նովելլաններ գրելը, Զոհրապը գրել է մի վիպակ, վորը նրա ստեղծագործության առաջին շրջանին է պատկանում։ Այդ վիպակը կոչվում է «Անհետացած սերունդ մը», լույս է տեսել «Մասիս» թերթերում 1886 թվին, իսկ մի տարի անց լույս է տեսել առանձին գրքով։

«Անհետացած սերունդ մը» վիպակի նյութը վերցված է ուսանողական կյանքից։ Սեդրակը, վորը սովորում է յերկրաչափություն և հարուստ ընտանիքի զավակ է, մնում է լքված թե ըն-

տանիքից և թե իր սիրած աղջկանից։ Վերջը խելագարվում է և վախճանվում։ Նրա մոտ ընկեր Տիգրանն ամուսնանում է Սեդրակի սիրած Սրբուհու հետ, առանձնանում է մի տեղ և ապրում է յերջանիկ։ Մյուս ընկերը՝ Խոսրովն—անընդունակի մեկը—հասարակության մեջ մեծ դերք է կրավում իր նենգ բնավորության հետևանքով։ Հարստանում է իր կնոջ հարուստ ոժիտով։ Բայց վերջում Խոսրովն ունենում է անհաջողություն թե հասարակական կյանքում և թե ընտանիքում։ Հետևանքը լինում է այն, որ թողնում է Պոլիսը և անհետանում։

Սա յե վիպակի համառոտ սյուժետը։

Վիպակի մեջ հաջող է գծված Խոսրովի տիպը։ «Նպատակն արդարացնում է միջոցը»,—ունենալով այս նշանաբանը, նա ամեն ինչ ծառայեցնում է իր անհատական շահերին։ «Վոչ վոք Խոսրովին չափ հաջողակ եր նվաստանալու արվեստի մեջ»,—ասում է Զոհրապը և տալիս է Խոսրովի բնավորության մի շարք հաջողված գեղարվեստական պատկերացումներ։

Հաջող են գծված նաև Խոսրովի կնոջ—Յեվգինեյի և հարուստ վաճառական Մարիմյանի տիպերը։ Այդ յերկուսի նշանաբանը «կյանքը հաճույքի մեջ է» հանրահռչակ ըմբռման մեջ է կայանում։ Մարիմյանը լինելով հարուստ և առորյա հոգսերից ազատ, կյանքի իմաստը գտնում է անբարոյականության մեջ։ Այստեղ Զոհրապն ունի մի կարևոր դիտողություն, այն, որ փողն ամենակարող է բուրժուական հասարակության մեջ և Մարիմյանը փողի ուժի շնորհիվ կարողանում է նվաստացնել իր առաջ գոռող ու մեծամիտ Յեվգինեյին և դժբախտացնել շատ ուրիշներին։

Դրանք են «Անհետացած սերունդ մը» վիպակի հաջողված պերսոնաժները։

Բայց այդ գործն ամբողջության մեջ վերցրած թույլ է։ Հատկապես Զոհրապին չի հաջողվում, յերբ ցանկանում է պատկերել գրական տիպերը։ Այդ շարքի տիպերը հոգեբանորեն չեն պատճառաբանված և անդեմ են։ Վերցնենք Սեդրակի տիպը։ Նա ոժտված է մարդկային բնավորության բոլոր լավ գծերով։ Անբընական և անկենդան է Սեդրակի ու Սրբուհու սերը—փոխանակ խոսելու սիրահար զույգին հետաքրքրող խնդիրների մասին, հանդիպումների ժամանակ խոսում են գրականության, ազգային գործերի, գիտության մինչև իսկ աստղաբաշխության մասին, բայց և վոչ մի խոսք սիրո մասին։ Նրանք ավելի շուտ խրտվիլակներ են, քան թե կենդանի մարդիկ։ Միանգամայն անբնական և անհամոզեցուցիչ է Սրբուհու ամուսնանալն ուրիշի հետ։

Հեղինակն այդ պատճառաբանում է նրանով, թե Սրբուհին ամուսնացել է իր կամքից անկախ, բայց այս կողմը չի յերևում վիպակի սյուժետի զարգացումից և վոչ մի գեղարվեստական ցուցադրություն չի ստացել։ Դրությունից դուրս գալու համար Զոհրապը մի շատ թույլ հիմնավորում է տալիս.—«Կանացի սիրտն անհատակ ու անքննելի վիհ մը է. ճշտիվ չի կարելի անոր հոգվույն վիճակը հաստատել»։

Չկարողանալով տալ Սուրբիկի հոգեբանական փոխանցումը, հեղինակը խնդրին տալիս է վոչնչով չհիմնավորված լուծում։ Անհամոզեցուցիչ է նաև Սեդրակի խելագարությունը և ապա Տիգրանի ու Սուրբիկի սերը։ Իրար սիրում են վորպես քույր ու յեղբայր և միայն Սուրբիկի ամուսնու՝ Արամ եֆենդու մահվան ժամին արտասանած խոսքից հետո, այն է՝ «Ամուսնանալ Սուրբիկի հետ և լինել իր զավակների հայր»,—նրանք սկսում են իրար սիրել բնական սիրով և վերջում ամուսնանում են։ Շինծու յե նաև Տիգրանի առաջին սերը Հելլենուհու հետ։ Առհասարակ Զոհրապի մոտ նկատելի յե, վոր սերը յերևան է գալիս աննորմալ վիճակով, բնական սիրո տեղ յերևան է գալիս միստիկական անմարմին սերը կամ դրա ծայրահեղ կողմը՝ ֆիզիոլոգիական անասնական կիրքը։

Այս կողմը հատկապես յերևան է գալիս նրա նովելլաներում։ Կոմպոզիցիայի և սյուժետի զարգացման կողմից այդ վիպակը նույնպես ունի մի շարք թերություններ։ Վիպակի մի մասը չի շաղկապված մյուսի հետ և որգանական ամբողջություն չի կազմում։ Վիպակի առաջին մասը, վոր կոչվում է «Սեդրակ», մի առանձին նովելլա յե, վոր շատ թույլ է կապված վիպակի յերկրորդ մասի հետ։ Շատ դեպքերում Զոհրապը տիպերի վիճակը չի հիմնավորում և դիմում է կույր պատահականության. որինակ՝ Տիգրանը պատահաբար հանդիպում է Հելլենուհուն և սիրահարվում նրա վրա, պատահաբար հանդիպում է Հելլենուհու դատավարությանը և ազատում մահից, պատահաբար գյուղում հանդիպում է Սրբուհուն և վերջն ամուսնանում նրա հետ։ Տիպերը չեն տրված իրենց միջավայրի մեջ։ Նկարագրում է յերեք ուսանողների կյանքը, թվում է, թե դա վիպակ է ուսանողական կյանքից, գոնե հեղինակն այդպես է ասում, բայց վոչ մի խոսք ուսանողական կյանքի մասին, նրանց կենցաղի մասին։

Տիպերի պատկերացումը տրված է ռոմանտիկական մեթոդով. գրական հերոսներն ոժտված են լավագույն կողմերով և վոչ մի արատ չունեն, իսկ բացասական տիպերը խտացրված են մարդ-

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-ում СССР
Ա. ԿՄ. Ա. Մասիսյանի
ՄԱՍՍԻՍԿԱՅԻՆ ԱՆՎԱՆ

կային բնավորության ամենաստոր գծերով։ Մինչև իսկ նրանց արտաքինը դարձյալ վանող է. որինակ՝ Խոսրովի արտաքինի նկարագիրը— «իր կարճ հասակով, ցած ճակատով, դուռ մազերով և ծաղկավեր ճակատով»։

Տիպերի կերտման այս ձևը հատուկ է ռոմանտիկական մեթոդին։ Հետո, գործ է ածում այնպիսի պատկերներ և վոճական դարձվածքներ, վորոնք հատուկ կարող են լինել դարձյալ ռոմանտիզմին, Հելլենուհու արտաքին նկարագիրը՝ «դեցուհվոյ մը պես գեղանի» կամ այս համեմատությունը՝ «հաղորդելով յուր աչերուն ավերիչ կրակը»։ Մի յերգչի մասին հետևյալն է ասում.—«Յերգիչ մը չեր նա, այլ ներշնչյալ ու գերագույն վոգի մը, վոր կիջներ բոլոր ներկայից վրա»։ Մի այլ պատկեր՝ «դյուրաբեկ հասակն յերազի մեջ յերևցող և խուսափող տեսիլ մը կհիշեցներ, զոր կորսցնելու վախով մարդս կվախնա ձեռք դպցնելու»։

Վերոհիշյալ բոլոր պատկերները հեռու յեն ռեալիստական լինելուց։ Զոհրապն այս վիպակում հիմնականում լինելով ռեալիզմի դիրքերի վրա, գերծ չե նաև ռոմանտիզմի ուժեղ ազդեցությունից։ «Անհետացած սերունդ մը» վիպակը Զոհրապի վաղ շրջանի գործերիցն է, վորպես ստեղծագործություն թույլ է և անմշակ։ Հետագայում Զոհրապը՝ հենց ինքը հրաժարվեց այդ գրվածքից։ Զոհրապը հետագայում չգրեց վիպակներ։ Զոհրապի վողջ տաղանդը յերևան յեկավ ռեալիստական նովելլայի ասպարեզում։ Գրիգոր Զոհրապի յերեք ժողովածուներում ամփոփված են ընդամենը 34 նովելլա, վորոնք իրենց հասարակական և գեղարվեստական արժեքի տեսակետից նույն բարձրության վրա չեն կանգնած։ Մի շարք նովելլաներ զուրկ են ընդհանրացումներից և տալիս են մասնակի յերևույթներ. վորոշ դեպքերում հիշեցնում են անեկդոտներ։ Դրանք ավելի շուտ արձակ բանաստեղծություններ են, քան նովելլաներ։ Նովելլաների այդ շարքին են պատկանում «Ռեհան», «Կապիկը», «Մամայիդ բարև ըրե», «Մյուսը», «Առջի սեր, առջի բարի», «Կատակ», «Խնդունքը», «Զեյրան», «Տալիլա», «Այինկա», «Դիմակը», «Ճոկո», «Արմենիսա», «Կարծեմ թե» և այլն։ Ինչպես այս, նույնպես և մյուս նովելլաներում Զոհրապի թեմատիկայի տիրապետող գիծը հանդիսանում է սեռի պրոբլեմը՝ տղամարդու և կնոջ վոխհարաբերության հարցը։ Այդ պրոբլեմը Զոհրապը լուծում է բուրժուական գաղափարախոսության տեսանկյունով։ Վերոհիշյալ նովելլաների մեջ Զոհրապը խոսնում է կնոջ դավաճանության մասին, առաջին սիրո քաղցրության մասին, և մի շարք այլ սեռական խնդիրների մասին, վորոնք հեռու յեն ընդհանրացումներից։

Այդ նովելլաների մեջ տիրապետող գիծը լիրիզմն է։ Նովելլային հատուկ պատմողական վոճը տեղի յե տալիս հեղինակի լիրիկական զեղումներին։ Այդ կողմից գեղեցիկ է հատկապես «Զաբուղոն» պատմվածքը, վորտեղ նկարագրված են ավազակի հոգեբանությունը և նրա բնավորության պոետական գծերը։ «Խնդունք», «Տալիլա», «Դիմակը» և «Ճոկո» նովելլաներում նույնպես ուժեղ է լիրիզմը, վորի շնորհիվ այդ գործերը նույնպես աչքի յեն ընկնում զգացմունքների հագեցվածությամբ։

Զոհրապի նովելլաներն աչքի յեն ընկնում նաև իրենց հաջող կոմպոզիցիայով։ Ստեղծում են մի շարք հաջող պատկերներ, որինակ՝ «Դիմակը» պատմվածքի մեջ Արշակը պարահանդեսի ժամանակ չի ճանաչում իր սիրածին, վորը դեմքին հագել եր դիմակ։ Աղջիկը մեղադրում է տղային այն բանում, վոր իրեն չճանաչելու պատճառը վոչ թե դիմակն եր, այլ այն, վոր տղաները սիրում են աչքերով և վոչ թե սրտով։ «Խնդունք» նովելլայի մեջ տալիս է այն աղջկա տիպը, վորն իր ժպիտը շռայլում է բոլորին ընդհանուր համակրանք ստեղծելու համար։

Վերոհիշյալ նովելլաների մյուս բնորոշ գիծն այն է, վոր գլխավոր հերոսները թեպետ առողջ են ֆիզիկապես, բայց հոգեպես հիվանդոտ տիպեր են։

Այդ կողմից Զոհրապի տիպերը հիշեցնում են Նար-Դոսի պատկերած տիպերը։ Այս հանգամանքը ցույց է տալիս, վոր նեխված է այն հասարակակարգը, վոր ստեղծում է այդպիսի հիվանդագին անձնավորություններ։ Այդ ցույց տալու համար կարելի յե բերել բազմաթիվ որինակներ. Սերֆինազը («Մամայիդ բարև ըրե») խմում է ողի և ջղային է, Եմման («Մյուսը») թողնում է անդամալույծ ամուսնուն և նետվում ուրիշի գիրկը, հետո դավաճանում է յերկրորդին և նորից հանձնվում իր նախկին ամուսնուն։ Եմմայի ամուսինը հիվանդոտ է և պետք է շուտով մեռնի։ Կարելի յե բերել այլ բազմաթիվ որինակներ ևս, բայց այսքանն էլ բավական է համոզվելու։ Վերև թված նովելլաները ռեալիստական են, բայց այստեղ ևս կան ռոմանտիկական պատկերներ, համեմատություններ, ինչպես այդ մենք տեսանք Զոհրապի վիպակի մեջ։ Մի որինակ. «Հիմա ալ մահը կուզար իր ձեռքին հափշտակելու համար զայն, ու ան ալ չեր հաջողեր, սիրելին հոն եր միշտ, իր դեմը, իր աչքի առջևը, այն առաջին որվա անուշ ու տրտում նայվածքովը, վոր չի գրուի, չի զուրցուիր ու չի մոռցուիր։» («Կատակ»)։ Զոհրապի նովելլաների յերկրորդ շարքը—դա այն պատմվածքներն են, վորտեղ հեղինակը տալիս է կնոջ, սիրո

և ընտանիքի պրոբլեմը։ Այդ նովելլաները հասարակական և գեղարվեստական արժեքի տեսակետից ավելի բարձր են կանգնած, քան նախորդ նովելլաները։ Այստեղ ավելի քիչ է լիրիզմը, դրա փոխարեն այստեղ առկա է սյուժետային զարգացումը և խնդիրներին տալիս է հասարակական արժեքավորում, այսինքն ընդհանրացումներ և կատարում։ Այդ տիպի նովելլաների շարքին կարելի է դասել՝ «Անդրշիրիմի սեր», «Պարահանդեսին վաղորդայնը», «Կապիկը», «Զմարաղտա», «Յերջանիկ մահը», «Սառա» և «Ֆոթուրլը» նովելլաները։

Այս նովելլաների մեջ գլխավոր թեման, ինչպես արդեն ասացինք, սիրո խնդիրն է։ Այդ հիմնական թեման Զոհրապը լուծում է յերկու իրար հակառակ ուղղությամբ, ըստ վորում այդ յերկու լուծումներն ել հասնում են ծայրահեղության։ Մի դեպքում սերը և կինը Զոհրապի մոտ յերևան են գալիս վորպես միստիկական անմարմին սեր, իսկ կինը՝ վորպես մի յերևակայական միֆ, յերկրորդ դեպքում սերը և կինը յերևան են գալիս վորպես ֆիզիոլոգիական անասնական կիրք, կինը վորպես գեղեցիկ մարմնի ապրանք և տղամարդու ֆիզիոլոգիական հաճույքներին բավարարող։

Վերցնենք «Անդրշիրիմի սեր» նովելլան։ Կոնսուլի կինը դավաճանության հետևանքով ամուսնաթող է լինում և վախճանվում։ Հերոսը յերևակայության մեջ պատկերում է այդ կնոջ արտաքին շքեղությունը և սիրահարվում է նրա վրա։ Հերոսուհու մահից հետո յե միայն, վոր հերոսը սիրում է նրան և բանը հասնում է նրան, վոր մեռածի հայրը պատմվածքի հերոսին կոչում է իր փեսան։ Այդ մի բառը լինում է հերոսի գերագույն հաճույքը։ «Անդրշիրիմի սեր» վերնագիրն արդեն իսկ բնութագրում է, թե ինչպիսի սեր պետք է լինի։ Դա մի սեր է առանց կոնկրետ կնոջ, հերոսը սիրահարված է միայն կնոջ մասպատկերի դրա։ Այդ նովելլայի շարքին են պատկանում նաև «Ռեհան», «Առջի սեր, առջի բարի», «Մայրապետը» և մի շարք այլ նովելլաներ։

Բայց Զոհրապի մոտ ավելի ուժեղ շեշտված է սիրո և կնոջ խնդրի լուծման յերկրորդ կողմը։ Այդ տիպի նովելլանների շարքին են պատկանում՝ «Պարահանդեսին վաղորդայնը», «Կապիկը», «Յերջանիկ մահը» և «Սառա» նովելլաները։ «Պարահանդեսին վաղորդայնի» հերոսուհին մի սալոնային տիկին է և կյանքի իմաստը գտնում է սիրո և վայելքի մեջ. «Սիրո համար ձանձրույթե ավելի մահացու բան չկա»,—ասում է հերոսուհին և յերբ բանաստեղծ Դավթյանը ցուցաբերում է միայն իդեալական-ասպետական սեր, ապա հերոսուհու կողմից արժանանում է ծաղրի ու հեգնանքի։ Հեղինակը Դավթյանի, այսինքն բարոյական մաքրության կողմն է՝ «գավառական բանական խելքը հաղթում է Պոլսո ապականությունը»։

Զոհրապը շնորհիվ իր ռեալիստական մեթոդին կարողացել է մերկացնել Պոլսի բարձր խավի բարքերի քայքայումը։ «Յերջանիկ մահը» նովելլայի հերոսուհին գտնում է, վոր կինը ստեղծված է տղամարդուն հաճույք պատճառելու համար միայն։ Հերոսուհին այն համոզմունքին է, թե կարիք չկա յերկարացնելու կնոջ կյանքը, վորովհետև «կինը իր յերիտասարդության, իր հրապույրներուն մեջ կրնա վար դնել, կեցնել։ Ձեռք կրնար, թող՝ տվեք ուրեմն, վոր երթա հոսկե. իր պաշտոնը, իր կոչումը ավարտած է ան, ինչ, կպահանջես ձայնը մարած յերգիչեն, վոր սրահին վրա՞յ կենայ, մինչև վոր սուլեն, ծաղրեն ու նախատեն զինքը. կինը ծիծաղ մըն է, պետք չե, վոր լացի փոխվի»։ («Կյանքը ինչպես վոր է», եջ 28)։

«Պարահանդեսին վաղորդայնը» նովելլայի նման Զոհրապն այստեղ ևս տալիս է բուրժուական վերնախավի այլասերված բարքերի քննադատությունը և Զոհրապը մեզ համար արժեքավոր է այնքանով, վոր չափով վոր նա տվել է իր դասակարգի՝ բուրժուազիայի քննադատությունը, այդ հասարակության նեխված կողմերի մերկացումը։

Կյանքի մասին մի քիչ այլ պատկերացում ունի Սառան—«Սառա» նովելլայի հերոսուհին։ Նրա կարծիքով կինը չպետք է սեռական վայելքի մասին մտածի, մինչև վոր կենդանի յե ամուսինը։ Իսկ յերբ մեռնում է Սառայի ամուսինը, նա պատրաստ է անձնատուր լինելու իր սիրածին, իր մեռած ամուսնու դեռ տաք դիակի մոտ։ Զոհրապի մի շարք նովելլաների հերոսուհիները, իրենք ել զգում են, վոր ստեղծված են հաճույքի իր լինելու համար։

Զոհրապի արժեքը կայանում է նրանում, վոր քննադատում է բուրժուական հասարակությունը, վոր կնոջը դարձրել է ապրանք։ Բուրժուազիան մասնավոր սեփականությունը հռչակեց սրբություն։ Այդ մասնավոր սեփականությունն ապրանքից տարածվեց նաև կնոջ վրա, դարձնելով նրան ևս ապրանք կապիտալիստական հասարակության մեջ.—«Սեփականության խնդիրն է աս, վոր անշուշտ նյութեն անցնելով մինչև կնոջ վրա կծանրանա»։

Զոհրապն արդարացնում է հերոսուհու դավաճանությունը, գտնելով վոր դա կապ չունի պատվի հետ։ Սեփականության

գաղափարն է այս դեպքում իշխողը, վորը տղամարդուն մղում է դեպի կնոջ կամքի բռնացումը։ Զոհրապի տարվող քննադատությունն այս ուղղությամբ հանդիսանում է նրա նովելլաների արժանիքներից մեկը, բայց նրա հիմնական թերությունն այն է, վոր այդ դրությունից դուրս գալու համար վոչ մի ելք չի առաջադրում։ Զոհրապն աշխատում է մեկնաբանել աշխարհը, բայց թե ինչպես այդ վերափոխել՝ դրա մասին և վոչ մի ծրագիր չի առաջադրում։

Անասնական սիրո և բիոլոգիզմի պատկերումը իր կուլմինացիոն կետին է հասնում «Կապիկ» նովելլայում, վորը հետևյալ բովանդակությունն ունի։ Կապիկը սիրահարվում է Մորիզոն անունով հույն սպասուհու վրա։ Նրան տեսնելուց կապիկը մարմնի մեջ գալիս է դող, աչքերը կրքոտությամբ փայլում են, իսկ ձերը Մորիզոնը խոսում է տղամարդկանց հետ, զգում է խանդ։ Մորիզոնը հեռանում է այն տնից, վորտեղ գտնվում եր կապիկը։ Վերջինս ընկնում է թախիծի մեջ, կախում է իրեն և վերջ տալիս կյանքին։

Նախորդ նովելլաների մեջ և հատկապես «Կապիկ» նովելլայում զգացվում է նատուրալիզմի ուժեղ ազդեցությունը Գրիգոր Զոհրապի վրա։ Նատուրալիզմի ազդեցությունը յերևան է գալիս մի այլ ուղղությամբ ևս։ Այդ այն է, վոր Զոհրապի մոտ վորոշակի շեշտված է ժառանգական հիվանդության թեորիան, վորը լայն ծավալ է ստացել յեվրոպական գրականության նատուրալիստական շկոլայում։ Կարելի յե բերել մի շարք որինակներ։ «Լուսահոգին» նովելլայի մեջ Գեվորգ աղան մեռնում է սրտի կաթվածից։ Նրա վորդի Նիկաղայոս աղան նույնպես մեռնում է սրտի կաթվածից, աղջիկը—Նիկտար խանումը դարձյալ մեռնում է նույն հիվանդությունից։ «Ու նորեն ժառանգություն եր, ախտի ժառանգություն»։

Զոհրապն իր գրական մեթոդով հիմնականում ռեալիստ է. պատկերները, վոճը ռեալիստական են։ Բայց իր վաղ ստեղծագործություններում տուրք է տվել ռոմանտիզմին, իսկ հետագա գործերում ուժեղ չափով յերևան է գալիս նաև նատուրալիզմի ազդեցությունը։

Վերոհիշյալ նովելլաներն այդ են վկայում։ Զոհրապը կարողացել է շատ դեպքում ճիշտ նկատել կյանքի վորոշ կողմերը և պատկերել այն։ Հատկապես հաջողված է, յերբ նա տալիս է բուրժուական վերնախավի քննադատությունը։ Զոհրապի վերոհիշյալ նովելլաների հերոսուհիները լինելով բուրժուական վերնախավից՝ ազատ են առորյա կյանքի հոգսերից։ Նրանք կյանքի իմաստը փնտրում են հաճույքի և սեռական վայելքի մեջ։ Նրանց մոտ ուժեղ է բիոլոգիական պահանջը, նրանք ամենից շատ սարսափում են ձանձրույթից։ Այդ հերոսուհիների մոտ բացակայում է առողջ, կենդանի սերը։ Աշխատավոր խավի կինը չեր կարող այդ ձևով մտածել։ Դրա լավագույն որինակը ծառայում է հենց Զոհրապի մի այլ նովելլան, վոր կոչվում է «Զմարաղտա»։ Զմարաղտան յեկել է գյուղից։ Նա յեկել է Պոլիս մի կտոր հաց վաստակելու համար։ Նա սիրում է մի մսագործ տղայի և խույս է տալիս հարուստ յերիտասարդների հետապնդումներից, վորոնց գրպանները լիքն են, բայց գլուխները դատարկ։ Յերիտասարդ տիրոջ հարցին, թե ինչու իրեն կամ մյուս հարուստներին սիրելու փոխարեն սիրում է մի -կեղտոտ մսագործի, Զմարաղտան դրան պատասխանում է. «Տիկիններն ձերն են և ձերը թող ըլլան, բայց գեղջուկ աղջիկը իրն է ու իրը պետք է մնա»։ («Լուռ ցավեր», եջ 210)։

Զմարաղտան տեսնում է այն դասակարգային անջրպետը, վոր բաժանում է իրեն իր տիրոջից։ Նա ասում է. «Բախտը քեզի ամեն վայելք լի ու լի շռայլել է անիրավ առատաձեռնությամբ և ատիկա՝ ուրիշներու զրկանքովը շինված է»։ (Նույն տեղ, եջ 209)։

Ինչպես տեսնում ենք, գեղջկուհին կյանքի և սիրո մասին միանգամայն այլ պատկերացում և հասկացողություն ունի, քան թե սալոնային տիկինները, վորոնք կյանքի մեջ ամենից շատ սարսափում են ձանձրույթից։

Հասարակական կյանքի ընդհանրացման և տիպականացման կողմից առավել ևս արժեքավոր են՝ «Ժամին բակը», «Փոստալը», «Մագթաղինեն» և «Ճիտին պարտքը» նովելլաները։ Այդ նովելլաները հաջողված են վոչ միայն Զոհրապի ստեղծագործության մեջ, այլ և հայ գրականության պատմության մեջ, դրանցից ամեն մեկը մի գլուխ գործոց է վորպես նովելլայի ժանրի ստեղծագործություն։ Նախքան այդպիսի վարպետության հասնելը Զոհրապը գրել է նաև մի շարք այլ արժեքավոր գործեր։ Դրանց շարքին են պատկանում՝ «Լուսահոգին», «Փուրթունա», «Մեղմ տեր», «Այրին» և «Վերադարձը» նովելլաները։

Այդ նովելլաները հետաքրքիր են գեղարվեստական արժեքի տեսակետից։ Բուրժուական վերնախավի քննադատությունն այստեղ առավել ևս ուժեղ է տրված, այնպես վոր հասարականորեն նույնպես արժեքավորվում են վերոհիշյալ նովելլաները։ Ունեն

հետաքրքիր կոմպոզիցիա և լարված սիտուացիաներ։ Հատկապես կիրառում է դրության և հակադրության մեթոդը, որ պատմվածքը դարձնում է առավել ևս տպավորիչ։ Վերցնենք «Լուսահոգին» նովելլան։ Նիկողոս աղա Գևորգյանը մեծ կարողության տեր, հասակն առած մի ամուրի յե։ Չի ամուսնանում, վորովհետև ասավածասեր է և սովորություններին հետևող. նրա յերկու քույրերը դեռ չեն ամուսնացել, սպասում է նրանց։ Շրջակայքում հռչակված է վորպես անչափ բարի մարդ. «Մայրերը և հայրերը «շնորհքով» խոսքը ժամիկ ընող զավկի որինակ ցույց կուտային այս ազբեկ մաղերով մարդը»։

Պատմվածքի առաջին մասի ընդհանուր տպավորությունն այս է։ Յերկրորդ մասի սյուժետը հակառակ ընթացք է ստանում։ Պարզվում է, վոր Նիկողոս աղայի շուրջը ստեղծված կարծիքը միանգամայն խարուսիկ է, վոր նա ծածուկ կապված է մի կնոջ հետ և ունի յերկու զավակ։ Մահից առաջ նրանց վոչինչ չի կտակել և կինն ու յերկու զավակները մնում են ծայր աստիճան չարիքի ու նեղության մեջ։ Դա ռեալիստական նովելլա յե, բայց Նիկողոս աղայի բացասական տիպը կերտելիս Զոհրապը վոչինչ չի խնայել դույները խտացնելու համար և ընկել է ռոմանտիկական չափազանցությունների մեջ, որինակ՝ Նիկողոս աղայի դիակի նկարագիրը. «Դիակի գարշելի հոտը կծավալեր, դուրս կելներ, գոց սնդուկին չորս դիեն... ժայթքելով դուրս գերեզմանի մը մինչև մուտքը հասնելուն իսկ չսպասելով»։

Զոհրապը «Լուսահոգի» գործի մեջ տալիս է հարուստների կեղծիքի մերկացումը։ Դրա հետ մեկտեղ ծաղրում է հոգևորականության, վոր վոչինչ չի խնայում հարուստ Նիկողոս աղային շուքով թաղելու համար։ Մի այլ տեղ՝ «Մեղա տեր» նովելլայում, նույնպես տալիս է կեղծ բարեպաշտի մերկացումը։ Այս պատմվածքի հերոսը մի իսկական Տարտյուֆ է։ Նա ամեն որ կանոնավոր հաճախում է յեկեղեցի և տիրոջից մեղա յե հայցում յերկրային մեղքերի համար։ Բայց այդ բարեպաշտի ներսում թաղված են մարդկային բնավորության ամենասարսափելի գծերը։ Նա հափշտակում է մեկի ավանդը և այդ մեծ գումարով դառնում ամենակարող հարուստներից մեկը։ Նա տիրացուից դառնում է Մարտիրոս աղա։ «Վերադարձը» նովելլայի մեջ տալիս է խոշոր վաճառականության խարդախ գործարքների մերկացումը։ Վաճառականությունը Զոհրապը նույնացնում է գողության հետ. «Վաճառականի կյանքը այն մեծ Քոլոնները, վորոնք զինքը հարստացուցած են և վորոնց մեջ յես Ներսես գողություն ևս բան մը չեմ դներ»։ («Կյանքը ինչպես վոր է», եջ 133)։

Ինչպես տեսնում ենք Զոհրապը նուրբ հումորով քննադատում է բուրժուական վերնախավը, սակայն չպետք է կարծել, թե Զոհրապն այդ քննադատությամբ ժխտում է բուրժուազիային։ Զոհրապի յերգիծանքն ունի դաստիարակչական բնույթ, այսինքն նա տալիս է բուրժուական վերնախավի քննադատությունը՝ նրան դաստիարակելու, ուղղելու նպատակով։ Զոհրապը յերևան է գալիս վորպես բարենորոգիչ։ Տալով բուրժուական վերնախավի քննադատությունը, նա միևնույն ժամանակ համակրանքով է խոսում աշխատավոր մարդկանց մասին։ Այդ կողմից արժեքավոր են նրա յերկու նովելլաները՝ «Ֆուրթունա» և «Այրին»։ Առաջին նովելլայում Զոհրապը հաջողությամբ կարողացել է տալ մանր սեփականատիրոջ՝ Նավաստու հոգեբանությունը և նրա վիճակը։

Նավաստին ունի մի փոքրիկ գեղեցիկ նավակ, վորին սիրում է հարազատ վորդու չափ։ Դա նրա միակ սեփականությունն է։ Դա յե նրա միակ յեկամուտի աղբյուրը։ Նավաստին նշանված է, և աշխատանի ժամին միշտ յերազում է ապագա բախտավոր կյանքի մասին։ Նա գոհ է իր վիճակից և կյանքից։ Մանր սեփականատիրոջ հոգեբանությունը տրված է շատ գեղեցիկ, Զոհրապի վոճին հատուկ պատկերավորությամբ։ Նավաստու յերազները յերկար չեն շարունակվում։ «Ֆուրթունան»—ամենակարող մրրիկը խորտակում է նավակը։ Նավաստին ծայրահեղ հուսահատության մեջ է, նա մոռանում է իր սիրած աղջկան և անձնատուր է լինում ողուն։ Նավաստու վողջ իդեալը ոդն է ցնդում ոսպնե պղպջակի նման։ Մանր սեփականատերը խորտակվում է մի պատահարով։

Պատմվածքը գրված է ուժեղ պատկերավորությամբ և գեղեցիկ լիրիզմով։ Մյուս նովելլայում («Այրին») Զոհրապն արծարծում է պանդխտության պրոբլեմը։

Համագյուղացիներ Մարտիրոսը և Խաչոն մի կտոր հաց վաստակելու համար գալիս են Կ. Պոլիս։ Մարտիրոսին բախտը ժպտում է. նա մտնում է ծառայության մի հարուստ վաճառականն։ Հարուստ թաղամասի՝ Բերայի կանայք հիացած են նրա արտաքինով և յերես են տալիս նրան։ Թեթև աշխատանքով ձեռք է բերում փող, վայելում է կյանքի հաճույքները և Բերայի հարուստ կանանց մարմինը։ Մարտիրոսը բարոյապես քայքայվում է, մոռանում է իր կնոջը, ընտանիքը և գյուղը։ Նա Պոլսում ամուսնանում է մի հարուստ կնոջ հետ և այդ ամուսնությունն որինականացնում է թաղի տերտերը, վաղորոք վերցնելով մի վոսկի՝ վորպես կաշառք։

Պանդուխտներից մյուսը՝ Խաչոն ծանր աշխատանքով վաստակում է վորոշ գումար, վերադառնում է իր ընտանիքի գիրկը։ Գնում է յեղներ ու գութան և ապրում յերջանիկ։ Այս նովելլայի մեջ հաջողված է այն մասը, վորտեղ նկարագրված են պանդխտության հետևանքով ստեղծված չարիքները, գյուղացիության քայքայումը և նրանց այլասերումը մեծ քաղաքներում։ Կապիտալիզմի հարվածների տակ քայքայվում է գյուղը։ Այս կողմը վորոշ արտահայտություն է գտել «Այրին» պատմվածքի մեջ։ Սակայն այդ բոլորից հետո Զոհրապը դարձյալ համապատասխան յեզրակացություն չի անում։ Նա կապիտալիզմը չի բացատրում։

Զոհրապը կարծում է, թե հարստանալու միակ պատճառը շահագործելը չե, այլ կարելի յե նաև մեծ հարստության տեր դարձնալ «հալալ» աշխատանքի միջոցով։ Այդ տեսանկյունով և տրված Ոհանջանի տիպը։ Նա իր «աշխատասիրության» շնորհիվ դառնում է գյուղի զորբաներից մեկը («Ֆոթուրլին» նովելլան)։

Յեվ այդպես, Զոհրապը չի ժխտում բուրժուական հասարակակարգը, նա միայն այդ հասարակակարգի վերանորոգչի դերով է հանդես գալիս։ Այս կողմը հատկապես յերևան է գալիս նրա ամենահայտնի և ամենակարևոր չորս նովելլաների մեջ՝ «Ճիտին պարտքը», «Փոսթալը», «Մագթաղինեն» և «Ժամին բակը»։

Սկսենք առաջին պատմվածքից։

«Ճիտին պարտք»-ի մեջ նա տալիս է սնանկացած առևտրականի կյանքը։ Նար-Դոսի «Աննա Սարոյանի» նման սկսում է այնտեղից, յերբ այդ ընտանիքը միանգամայն սնանկացած է և կարոտ է որվա հացի։

Հայրը գիշեր ցերեկ մտածում է իր յերկու փոքրիկ աղջիկներին կերակրելու մասին։ Նրա անբաժան ընկերն է փոքրիկ պայուսակը, վորի մեջ տանում է տուն հաց և այլ կենսամթերքներ իր փոքրիկներին կերակրելու համար։ Կյանքը քանի գնում, այնքան դժվար է դառնում. «Պարտքերը կդիզվեին շուրջը—չարչին ամեն կողմ»։

Դրությունը հասնում է այնտեղ, վոր չի կարողանում դանել գոնե չոր հաց զավակներին կերակրելու համար։ Նա խեղդվում է ծովում՝ պայուսակը կապված վզից, լցված քարերով։

Պայուսակն անգամ դիակին հանգիստ չի տալիս, նա նրա անբաժան ընկերն է՝ «ճիտին պարտքը». «Ջուրին մեջ յերկունքն ալ կապված եյին, ինչպես կյանքի մեջ ալ զատված չեյին իրարե»։ Պայուսակը յերևան է գալիս վորպես չքավորության և կարիքի սիմվոլ։ Ծավալով շատ փոքր է այդ նովելլան, բայց Զոհրապը

մեծ հաջողությամբ կարողացել է յերեվույթները բյուրեղացնել և խորն իմաստ տալ։ Նովելլան գրված է մեծ հուզականությամբ, նուրբ լիրիզմով, սեղմ և պատկերավոր վոճով։ Գրականությունը ժողովրդի կյանքի հայելու—Զոհրապի սկզբունքն այստեղ յերևան է գալիս իր դրական կողմերով։ «Ճիտին պարտքը» նովելլայի մեջ նա կարողացել է կատարել այդ սկզբունքի իսկական կիրառումը։

Բուրժուական հասարակության վերնախավի քննադատությունը և գրականությունը ժողովրդի կյանքի հայելու նրա սկզբունքն իր փայլուն արտահայտությունն է գտել «Փոստալը» նովելլայի մեջ։ Այդ նույն սկզբունքը հաջողությամբ կիրառել է նաև «Մագթաղինե» նովելլայում։ Սկսենք վերջին նովելլայից։

«Մագթաղինե» պատմվածքում Զոհրապը պատկերում է պոռնիկի տիպը։ Նա ոժված է պոռնիկի բոլոր հատկություններով, գիտե տարբեր մարդկանց հետ վարվելու ձևերը։ Անփորձ տղամարդկանց հանդեպ «նախահարձակը ինքը կըլլար»։ Զոհրապը վոգբում է Մագթաղինեյի անկումը։ Նրա պոռնիկ դառնալը կատարվել է իր կամքից անկախ։ Բուրժուական հասարակությունն է նրան դարձրել պոռնիկ, կարիքն է նրան նետել դեպի մարմնի վաճառքը. «ինե յերկու տարու պզտիկ քույր մը ու ավելի պզտիկ յեղբայր մը ունիմ, մեյ մըն ալ մեծ մայր մը ունիմ... ամենքը յես կպահեմ»,—ասում է Մագթաղինեն։

Զոհրապի առավելությունը կայանում է նրանում, վոր նա տեսել է կապիտալիզմի չարիքներից մեկը, այն, վոր բուրժուական հասարակության մեջ ամեն ինչ, դրա հետ նաև կնոջ մարմինը հանվում է վաճառքի։ Զոհրապը պոռնկության խնդիրը չի վերցնում ինքնանպատակ ձևով, այլ դրա մեջ գնում է սոցիալական բովանդակություն։ Կարիքն է ստիպել Մագթաղինեյին ծախելու իր մարմինը։ Նա ասում է. «Չեմ կրնար հաղորդություն առնել, քանի վոր վերջը դարձյալ մեղք պիտի գործեմ, կբացատրեր ինձի։ Ի՞նչով պիտի ապրիմ յես, քույրս, յեղբայրս, ծեր մեծ մայրս պիտի ապրեցնեմ»։

Ինչպես տեսնում ենք, Մագթաղինեն վոչնչով նման չե «Պարահանդեսի վաղորդայնի» սալոնային հերոսուհուն, վորը կյանքում ամենից շատ վախենում է ձանձրույթից։

Գյուղական միջավայրից յելած Մագթաղինեն ծախում է իր մարմինը հաց վաստակելու համար, իր ընտանիքը սովից փրկելու համար, իսկ «Պարահանդեսին վաղորդայնի» հերոսուհին այդ նույն բանը կատարում է կյանքից չձանձրանալու համար, ըստ

վորում վերջինս լինելով քաղաքակրթված իր մարմինը վաճառում է ավելի «նուրբ» ձևերով։

Բուրժուական հասարակության վերնախավի քննադատությունն ավելի սուր ձևով տրված է «Փոստալում»։

Համառոտ բովանդակությունն այս է։

Շատ հարուստ Ղազար եֆենդու կինը՝ Սուրբիկը միջնորդ հալի Տյուֆիկից պահանջում է մի կին սպասուհի իր յերիտասարդ վորդուն՝ Ոնիկին սպասարկելու համար. «Ցավ վախնալով վոր գալիք սպասուհին Ոնիկին սենյակը շոկելու, զգեստները մաքրելու սահմանելովը՝ պետք յեղածեն ավելի բացահայտ կերպով իր դիտավորությունները հասկացուցած կըլլա, իսկույն ավելցուց»... «Հանըմին ուզածը միամիտ աղջիկ մըն եր»։ Միջնորդուհին գյուղից գտնում է ուզած սպասուհին։ Դա լինում է նոր ամուսնացած Տիգրանուհին՝ ոժտված կանացի բոլոր հատկություններով՝ «մեջքը բարակ, բայց հասակին բարձրությունը և բարձերուն հարստությունը փայլած եր»։

Տիգրանուհին ստիպված թողնում է գյուղը, վորովհետև ածխահատ բանվոր ամուսինը հանքում կոտրել եր վոտքը և այժմ անդամալույծ ու անգործ նստած եր տանը։ Տիգրանուհին ընտանիքը կերակրելու համար գալիս է քաղաք և վարձվում է սպասուհի Սուրբիկ հանըմի տանը։ Սուրբիկը գոհ է այդ ընտրությունից։ Նա գտել է իր ուզածը։ Տիգրանուհու շնորհիվ Ոնիկի մայրը հույս ունի իր վորդուն կտրել Բերայի ապականված միջավայրից։ Տիգրանուհու համակրությունը գրավելու համար նվիրում է շորեր, հյուրասիրում է քաղցրավենիքներով և ավելացնում ոռճիկը։

Տիգրանուհին լինելով միամիտ, այդ ամենը վերագրում է տիրուհու բարերարությանը։

Ոնիկը հետապնդում է Նրան և միամիտ Տիգրանուհին գոհ է գնում նրա կրքերին։ Յերկու տարուց հետո Տիգրանուհին հղիանում է և բոլորի կողմից խայտառակված, ծաղր ու ծանակի յենթարկված դուրս է շպրտվում Ղազար եֆենդու տնից։

Ղազար եֆենդին և Սուրբիկ հանըմը հռչակվում են վորպես բարերար ու բարոյական մարդիկ և մարդիկ գատապարտում են Փոստալին։

Տիգրանուհին մնում է անոթևան։ Մեռնում է նրա զավակը։ Մայրը ծախսում է իր վերջին կոպեկները, գնում է ծաղիկներ և դարդարում իր մանկիկի գերեզմանը։

Այս նովելլան թեմատիկայի և կոմպոզիցիայի տեսակետից շատ և որգանական նմանություն ունի, յեթե համեմատելու լինենք Մոպասանի «Ճարպագունդ» նովելլայի հետ։

Տիգրանուհուն դժբախտացրել է Ոնիկը և այդ ամենը կատարվել է Ոնիկի մոր՝ Սուրբիկ հանըմի շնորհիվ։

Այդ գիծը հատուկ չի յեղել միայն Գոլսի բուրժուական վերնախավին։ Գրականության պատմությունից հայտնի յե, վոր բարձր հասարակության մեջ ընդունված է յեղել այն պրակտիկան, վոր վարձում էին վորպես սպասուհիներ գեղջկուհիներին՝ հետին նպատակների համար։ Այդ յերևույթի մասին բավականին դիտողություններ ունի Լ. Տոլստոյը. որինակ՝ Տոլստոյի մեծ յեղբայր Վալոդիայի և սպասուհի Մաշայի դեպքը (տես Տոլստոյ «Մանկություն»), կամ «Հարություն» վեպի հետևյալ տողերը. «Տիկինն ընդունեց (Կատյուշային) քաղցրությամբ, հյուրասիրեց կարկանդակներով ու քաղցր գինով» և հետո «Մասլովան լսեց, վոր տան տիրուհին ասում է իր մասին, թե թարմ է, գեղջկուհի յե»։

Ինչպես տեսնում ենք, այդ յերևույթը հատուկ է յեղել նաև ռուսական աղնվականության միջավայրում։ Զոհրապը շնորհիվ միայն իր սուր դիտողության կարողացել է նկատել այն և տալ «Փոստալ» նովելլայում։

Ինչպես արդեն ասացինք «Փոստալը» շատ նման է Մոպասանի «Ճարպագունդ» նովելլային։ Այդ հանգամանքը ցույց է տալիս, վոր Զոհրապը ազդեցություն է կրել ֆրանսիական մեծագույն նովելլիստից։ Թե Փոստալը և թե Ճարպագունդը գյուղական միջավայրից յեն յելել. յերկուսն էլ գոհ են դառնում բարձր հասարակության ստորությունններին։ Տիգրանուհին գոհ չի դառնում Ոնիկին և այդ ամենը նախապատրաստել է վերջինիս մայրը. իսկ Ճարպագունդը հյուրանոցում գոհ է գնում գերմանական սպայի կրքերին և այդ կատարվել է դարձյալ այսպես կոչված հասարակության ընտրյալների թելադրանքով։ Թե Փոստալը և թե Ճարպագունդն առաջին հերթին հասարակական պարսավանքի յեն յենթարկվում հենց նրանց կողմից, ովքեր պատճառ են հանդիսացել նրանց անկմանը. Փոստալին առաջին հերթին դատապարտում են Ղազար եֆենդին ու իր կինը, իսկ Ճարպագնդին իր հետ ուղեկցող և այդ քայլին ստիպող ֆրանսիացի «բարեպաշտ» քաղքենիները։

Զոհրապը Մոպասանի նման նուրբ հումորով ծաղրում է կեղծ բարեպաշտի տիպը և յերկուսն էլ իրենց հերոսուհիների անկումը

վերագրում են տիրող պայմաններին և այդ պայմանները ղեկավարող տիրապետող խավերին։ Ցերկուան եվ մեծ համակրանքով են խոսում իրենց հերոսուհիների մասին և վողբում են նրանց անկումը։

Վերոհիշյալ նովելլաները նման են նաև կոմպոզիցիայի կողմից։ Որինակ՝ թե «Փոստալի» և թե «Ճարպագնդի» մեջ բոլոր դեպքերը կատարվում են համարյա մի տեղում. Զոհրապի մոտ բոլորը կատարվում է Սուրբիկ հանրմի տանը, իսկ Մոպասանի մոտ հյուրանոցում։ Ցերկու նովելլաներն եվ հագեցված են հորդաբուխ նուրբ լիրիզմով։

Նրանց հերոսուհիները հագեցված են հուզականությամբ. առաջինի մոտ՝ Փոստալի գեղեցիկ մայրական զգացմունքները զավակի նկատմամբ, վորին նվիրում է իր վերջին կոպեկները, իսկ Մոպասանի մոտ այն, վոր Ճարպագունդը դարձյալ չի խնայում իր վերջին կտոր հացը և տալիս է այն քաղցած ճամբորդներին, ինքը մնալով առանց հացի, ինչպես Տիգրանուհին մնաց առանց գրոշի։

Այս բոլոր որինակները ցույց են տալիս, վոր Գրիգոր Զոհրապն որգանական ազդեցություն է կրել Մոպասանից։ Զոհրապը վորոշ ազդեցություն է կրել նաև Եմիլ Զոլայից. որինակ՝ Մագթաղինեն հիշեցնում է Նանային։ Ցերկուսն եվ դուրս են յեկել գյուղական միջավայրից։ Ցերկուսն եվ զոհ են դառնում մեծ քաղաքի տարրերքին։

Զոհրապի «Ճիտին պարտքը» և «Փոստալը» հանդիսանում են նրա լավագույն գործերը։ Շնորհիվ իր ռեալիստական մեթոդին կարողացել է բուրժուական հասարակության թարախակալած կողմերը մերկացնել։ Այդ նովելլաները խոշոր գեղարվեստական ստեղծագործություններ են։ Գրված են կուռ և միասնական կոմպոզիցիայով։ Գրված են սեղմ, գեղեցիկ և պատկերավոր վոճով։ Պատկերները և հերոսների գործածած լեզուն ռեալիստական են։ Պատմողականության հետ մեկտեղ ուժեղ է նաև լիրիզմը. դա հանդիսանում է Զոհրապի նովելլաների առանձնահատկություններից մեկը։ Շնորհիվ դրան վերոհիշյալ նովելլաները դառնում են պատկերավոր և հուզիչ։

Բուրժուական հասարակությունը վոչ միայն կնոջ մարմինն է դարձրել ծախու, այլ և պատիվը, հավատքը և բարոյականության նորմաները։ Բարձր հոգևորականությունը դաշնակցած բուրժուազիայի հետ՝ յեկեղեցին, հավատքը նույնպես դարձրել է առևտրի առարկա։ Այդ կողմից բնորոշ է Զոհրապի «Ժամին բակը» պատմվածքը։ Այս պատմվածքի մեջ Զոհրապը կարողացել

է միանգամայն հաջողությամբ գործադրել ռեալիստական մեթոդը, վորի շնորհիվ «Ժամին բակը» պատմվածքը հանդիսանում է Զոհրապի լավագույն գործերից մեկը։ Համառոտ այսուժետն այս է։

Թաղական խորհուրդը վորոշում է մայր յեկեղեցու բակում թաղել մի հարստի դիակ, վորն իր անցյալով և վարքով արժանի չէ այդ մեծարանքին։ Յեկեղեցու քահանան դեմ է դրան, համարելով այդ սրբապղծություն, և դիմում է առաջնորդին։ Առաջնորդը քահանային խորհուրդ է տալիս չհակառակել դրան և խոնարհվել հարուստների առաջ։ Սակայն քահանան չի կարողանում հաշտվել այդ ստորացուցիչ մտքի հետ։ Բայց նա անզոր է և հարուստի դիակը թաղում են ժամի բակում։ Չկարողանալով դիմադրել դրան, քահանան դիմում է պասիվ ընդդիմադրության, այսինքն՝ այլևս չի հաճախում յեկեղեցի։ Հավատացյալ քահանան՝ տեր-Աբրահամը չհաշտվելով այդ մտքի հետ և չտանելով յեկեղեցու այդ անպատվությունը սրտի կսկիծից հիվանդանում է ու մեռնում։

Այս պատմվածքի մեջ, շնորհիվ իր ռեալիստական մեթոդի, Գրիգոր Զոհրապը կարողացել է նուրբ հումորով ծաղրել և մերկացնել թաղական խորհրդի անդամներին, բարձր հոգևորականությանը և բուրժուազիային։ Զոհրապը քննադատում է բարձր հոգևորականությանը և բուրժուազիային այն բանի համար, վոր նրանք մինչև անդամ հավատքը դուրս են հանել շուկա և յեկեղեցու բակը վերածել առևտրի։

Հանդուցյալի բարեկամները շնորհիվ խոստացած 150 վոսկուն կարողացել են բոլորին գրավել իրենց կողմը։ Թաղական խորհրդի անդամներից մեկն ասում է. «150 վոսկին կարևոր գումար մըն է» և «ինքն ալ հույս ուներ մի որ թաղվելու բակում։ Ինքն ալ իր կարգին որ մը պզտիկ գումարով մը ժամու մը մեջ պիտի կրնար թաղվել. ինչու չէ։ Մեծ ճարտարուեստը (բուրժուական հասարակությունը Գ. Ա.) ամեն բան արժանացուցած եր այս դարուն. յեկեղեցին ալ պատվոյ և անմահության գիները իջեցնելու յեր»։ («Կյանքը ինչպես վոր է», եջ 73)։

Յեվ այսպես, կապիտալիզմը «մեծ ճարտարուեստը» ամեն ինչ դարձրել է առևտրի առարկա—յեկեղեցին, պատիվը և անմահությունը նույնպես հանել և վաճառքի։

Թաղական խորհրդի անդամների դեմ ուղղված ուժեղ ծաղրը յերևան է գալիս այս բնորոշ պատկերի մեջ։—«Թաղական մը ննջեցեալին ժամու մեջ թաղվելուն դեմ առարկություն արավ, անիկա փորձ խանութպանի հնարք մըն եր, միտքը հիսուն վոսկի

մը եվել փրցնել եր միայն»։ Առևտուրը վերջացած է։ Հարուստ ննջեցյալը թաղվում է ժամի բակում։ Նա հռչակվում է վորպես բարեպաշտ և վողորմասեր մարդ, մինչդեռ իրականության մեջ նա յեղել է ամենասատոր մարդկանցից մեկը։ «Հանգուցյալի կյանքն ալ, խոսքը միջերնիս,—ասում է թաղականներից մեկը,—շատ մաքուր չեր ու պատմություններ անպատված ու վոնդված կուլսերու, ընդունված ու չվերադարձված ավանդներու, սուտ յերդումներու՝ դուրս թափվեցան»։

Հեղինակը շատ դեպքերում չի կարողանում սառնասրտությամբ պատմել, նա հաճախակի ընդհատում է պատմության թելը ու խորհրդածություններ անում, վորոնց մեջ յերևում է հեղինակի վերաբերմունքը դեպի պատկերվող յերևույթը։ Որինակ. «Ու խորհրդարանին մեջ այս ուրթը—տասը մարդիկ հավաքված մարդկության են նուիրական սկզբունքները կառնեյին կծախեյին»։

Այդ առևտրի հետ չի հաշտվում միայն քահանան՝ տեր-Աբրահամը, նա բողոքով դիմում է առաջնորդին, իսկ վերջինս պատասխանում է. «Պատմությունը կհայտնե, վոր ամեն հասարակության մեջ դասակարգի զանազանությունները միշտ գոյություն ունեցած են և ասկե վերջն ալ պիտի մնան։ Մեր հասարակության մեջ ունեվորը զատ դասակարգը մը կազմած է և պիտի կազմե, այն ալ մեր հոտին մեկ մասն է, են կարևոր մասը, զայն ալ սիրաշահենք»։

Խնդիրը պարզ է։ Բոլորը հարստի կողմն են։ Նրա դիակը թաղվում է ժամի բակում, իսկ «լրագիրները կհաղորդեն մանրամասնությունները, փղծելով այս մարդու մեծավայելուչ բարեպաշտության վրա»։ Ցավ այդպես ծախված են վոչ միայն յեկեղեցիները, այլ և լրագրերը։

Պատմվածքի սյուժետի զարգացումն ընթանում է իրականության և հերոսի՝ տեր-Աբրահամի իդեալի կոնտրաստի միջոցով, վորի հետևանքով խորտակվում է իդեալը։

Գրիգոր Զոհրապը հանդես է գալիս վորպես ռեֆորմատոր։ Նա պահանջում է, վոր յեկեղեցին լինի իր բարձրության վրա, այլ խոսքով ասած՝ Զոհրապը չի ժխտում կրոնը և յեկեղեցին։ Շնորհիվ ռեալիստական մեթոդի Զոհրապը կարողացել է «Ժամին բակը» նովելլայի մեջ փայլուն կերպով տալ բուրժուական հասարակության և առաջին հերթին կղերականության ստոր գծերի մերկացումը։ Դեպքերն ընթանում են լարված։ Կոմպոզիցիայի, վոճի հատակության և գեղարվեստական ընդհանրացման տեսակետից

այդ նովելլան Զոհրապի ամենահաջողված ռեալիստական պատմվածքներից մեկն է։

Զոհրապի նովելլաների ընդհանուր թերությունն այն է, վոր նա իր մի շարք նովելլաներում տալիս է մանր բուրժուազիայի քայքայման պատկերը, բայց չի տալիս այդ յերևույթի պատճառը՝ առևտրական բուրժուազիայի տիպերի ամբողջական պատկերը։ Այդ կարևոր կողմը վրիպել է նրա տեսադաշտից։ Զոհրապն իր հոդվածներից մեկում խոսելով Շիրվանզադեյի Ելիզբարով տիպի մասին, հայտնում է այն միտքը, թե Ելիզբարովներ վորքան ասեք կարելի յե գտնել նաև Կ. Պոլսում (տես «Շիրվանզադեն և իր գործը» խմբ. Տ. Կամսարականի, Զոհրապի հոդվածը «Պատվի համար»-ի մասին)։ Բայց իր ստեղծագործությունների մեջ այդ տիպը ամբողջական կոնկրետացում չի ստացել։ Ցավ յերբ առիթ է լինում տալու հարուստ ընտանիքի կյանքը, սկսում է այնտեղից, յերբ այդ ընտանիքն արդեն սնանկացած է, որինակ «Ճիտին պարքը» նովելլան։

Այս հանգամանքը Զոհրապի նովելլաները վորոշ դեպքերում դարձնում է միակողմանի։ Չնայած Զոհրապի նովելլաների մի շարք թերություններին, այնուամենայնիվ նա հանդիսանում է կլասիկ նովելլիստ ընդհանրապես հայ գրականության պատմության մեջ։ Նրա մի շարք պատմվածքները, ինչպիսիքն են՝ «Ճիտին պարքը», «Փոստալը», «Ժամին բակը» և այլ բազմաթիվ նովելլաները ցույց են տալիս, վոր նա հանդիսանում է հայ գրականության մեջ ռեալիստական նովելլայի մեծագույն ներկայացուցիչներից մեկը։ Զոհրապի նախորդն արևմտահայ գրականության մեջ, ինչպես գիտենք, հանդիսացել է Ա. Արփիարյանը և Զոհրապն անկասկած ազդեցություն է կրել արևմտահայ գրականության մեջ նովելլայի սկզբնավորող Ա. Արփիարյանից։ Այդ կարելի յե ցույց տալ մի շարք որինակներով։ Արփիարյանն իր «Նորավեպքի» մեջ դնում է կնոջ և ընտանիքի պրոբլեմը, կնոջ իրավական աղատության խնդիրը։ Վերոհիշյալ խնդիրները, ինչպես տեսանք, Արփիարյանը լուծեց բուրժուական լիբերալիզմի դիրքերից։ Արփիարյանն իր նովելլաներում դնելով այդպիսի թեմատիկա և տալով խնդրի այդպիսի լուծում, անկասկած հանդիսացավ հետագայում Զոհրապի նախատիպը։ Արփիարյանն անկասկած հանդիսացել է Զոհրապի ուսուցիչը նովելլայի ասպարիզում, սակայն հետագայում աշակերտն անհամեմատ գերազանցեց իր ուսուցչին։ Վերցնենք Արփիարյանի «Ցերազի մը գինը» նովելլան։ Գրագիրը վորովհետև աղքատ է, դրա համար

եւ չի կարողանում առնել իր սիրածին՝ Սոֆիկին և վերջինս ամուսնանում է հարուստ Հակոբ աղայի հետ։ Այդ թեմատիկան վորքան կուզեք կա Զոհրապի մոտ, որինակ՝ Սեֆերյանի և Զարուհու խնդիրը «Կատակ» նովելլայում, կամ Սեդրակի ու Սուրբիկի անհաջող սերը «Անհետացած սերունդ մը» վիպակում և այլն։ Արփիարյանի «Կատակ մը» նովելլայում ձկնորսի թոռը Մաքրիկը մի կտոր հացի համար մտնում է սպասուհի հարուստ Գրիգոր եֆենդու տունը և զոհ է գնում վերջինիս վորդի հղփացած յերիտասարդ Վահրամի կրքերին։

Դժվար չէ նկատել, վոր Վահրամը Զոհրապի Ոնիկի նախատիպն է։ Զոհրապի «Փոստալ»-ը իր մի շարք կողմերով շատ է հիշեցնում Արփիարյանի «Կատակ մը» նովելլան. Տիգրանուհին Մաքրիկի նման զոհ է գնում հարուստ յերիտասարդին, Ոնիկը Վահրամի նման այլասերված հարուստ յերիտասարդ է։ Ցեվ այդ նմանությունը վոչ միայն թեմատիկայի նմանություն է, այլ և յերկուսն էլ խնդրին նույնանման լուծում են տալիս։ Վերոհիշյալ հեղինակների մյուս նովելլաների մեջ նույնպես կան սերտ նմանություններ։ Այս բոլորը գալիս են ասելու, վոր Զոհրապը վորոշ ազդեցություն է կրել Արփիար Արփիարյանից թե թեմատիկայի և թե գրական ստեղծագործական ուղղությամբ։ Սակայն Զոհրապը մնացել է ինքնուրույն վոճի, պատկերների և տիպերի կերտման ուղղությամբ ու ռեալիստական նովելլայի ասպարեզում Զոհրապը մի քանի գլխով բարձր է կանգնած Արփիարյանից։ Զոհրապը շնորհիվ իր տաղանդի ազդել է հետագա ռեալիստ նովելլիստների վրա և ունեցել է իր հետևորդները։ Դրանց մեջ առաջին հերթին պետք է հիշատակել Զիֆթե-Սարաֆին (Հովհաննես Ասպետին)։ Որինակ՝ «Կյանք մը» և «Ցերկու կյանքներ» նովելլաները թեմատիկայի և գրելակերպի տեսակետից շատ են հիշեցնում Զոհրապի «Մագթաղինե» նովելլան։ (Թեոդիկի «Տարեցույցը» 1923—24 թ.թ.)։ Զոհրապի ազդեցությունը Զիֆթե-Սարաֆի վրա պարզելու համար անհրաժեշտ է մի քանի խոսք ասել Զիֆթե-Սարաֆի և նրա «Միամտի մը արկածները» գրվածքի մասին։

Զիֆթե-Սարաֆը ծնվել է 1873 թվին, գրական ասպարեզ է իջնում 1900-ական թվականներին։ Հայտնի յե դառնում վորպես գրող 20-րդ դարի առաջին քառորդում։

Գրել է մի շարք մեմուարային գործեր («Գոլսական տեսարաններ» և «Ցեվրոպական ճեպընթաց» կամ «Ճամբորդի նոթերը»), բայց գրական հռչակ է ստանում իր մի գործով, վորը կոչվում է «Միամտի մը արկածները»։ Այդ գրվածքը լույս է տեսել 1906—7 թվին, իսկ մի տարի անց լույս է տեսնում առանձին գրքով։ Ըստ հեղինակի մտադրության «Միամտի մը արկածները» պիտի բաղկացած լիներ յերեք մասից. ա) մաս «Ցերը ամուրի յեր», բ) «Ամուսնանալն վերջը», գ) «Ցերը այրի յեր»։ Այսինքն հեղինակը մտադիր եր տալ իր հերոսի կյանքը սկզբից մինչև վերջ։ Բայց հրատարակել է միայն վերոհիշյալ գործի առաջին մասը, այսինքն՝ «Ցերը ամուրի յեր»։

Արտաշես Հարությունյանի և Զիֆթե-Սարաֆի առաջաբաններից յերևում է, վոր այդ գործը իր ժամանակին արևմտահայ գրականության մեջ մեծ աղմուկ է հանել։ Շատերը հեղինակին մեղադրում եյին պոռնոգրաֆիայի մեջ, իսկ մյուս մասը պաշտպանում եր հեղինակին այդ հարձակումներից։ Ինքը հեղինակը իր հակառակորդներին պատասխանել է Անատոլ Ֆրանսի հետևյալ տողերով. «Անբարոյական կկոչենք զանոնք, վոր չունին մեր բարոյականը և սկեպտիկ՝ զանոնք, վոր չունին մեր սեփական պատրանքները»։ Իսկ Արտաշես Հարությունյանը մոչ մի բառ չի խնայում փառաբանելու համար Զիֆթե-Սարաֆին, վորակելով նրան տաղանդավոր, մեծանուն գրող։ Հասկանալու համար այդ վեճերն, անհրաժեշտ է մի քիչ խոսել հեղինակի վեպի մասին։ Զիֆթե-Սարաֆի «Միամտի մը արկածները» պատկանում է եպիկական տեսակի արկածային վեպի ժանրին։

Ցեվրոպական գրականության մեջ այդ ժանրով շատ են գրել. որինակ՝ Սերվանտեսի Դոն-Քիշոտի արկածները կամ Լեսաժի Ժուլ-Բլազի արկածները։ Սակայն Սերվանտեսի և Լեսաժի հերոսների արկածները չեն դառնում եպոպեենտրիկ յերևույթ, ինքնաբավ արկած։ Հերոսների արկածները վերոհիշյալ հեղինակների համար հանդիսանում են միջոց յենթարկելու վոչնչացնող քննադատության բազմաթիվ ձրիակեր խավերին, բազմաթիվ մարդկանց և յերևույթներ, ծաղրելու պետական կարգերը և այն ամենը, ինչին վոր հանդիպում է հերոսն իր արկածների ժամանակ։ Ցեվ այսպես արկածը յերևան է գալիս վորպես միջոց հեղինակի աշխարհայացքը կոնկրետացնելու համար։

Այդպես չէ Զիֆթե-Սարաֆը։ Նրա մոտ հերոսի արկածները հանդես են գալիս ինքնաբավ ձևով, վորպես սոսկ արկած։ Ցեվ այս հանգամանքն է, վոր Զիֆթե-Սարաֆի գործը թուլացնում է և սոցիալական արժեքի տեսակետից արժեքազրկում, կամ դարձնում համարյա անարժեք։

Խոսենք փաստերով. հեղինակը նավում հանդիպում է մի հայ յերիտասարդի, վորի անունն է Հովհաննես Տոհմիկ։ Պարզվում է, վոր այդ յերիտասարդը բարձր խավից է և գնում է արտասահման բժշկություն սովորելու։ Նա խոստանում է զրուցակցին գրել իր կյանքի մեջ յեղած արկածները։ Նա կատարում է իր խոսումը։ Գրում է ընդամենը տասներկու նամակ։ «Միամտի մը արկածները» կազմված է 12 առանձին նովելներից և կապակցված է իրար հետ մի հերոսով։ Այնպես վոր դրանք առանձին նովելներ են և վերոհիշյալ գործը չի կարելի համարել վեպ սովորական հասկացողությամբ։ Միասնական սյուժետ չկա։ Հովհաննես Տոհմիկը պատմում է իր բազմաթիվ արկածները։ Հորյեղբոր մահից հետո Հովհաննես Տոհմիկը ժառանգում է մեծ կարողություն։ Նա թողնում է համալսարանը, շրջում է Յեվրոպայի բազմաթիվ վայրերը և ահա սկսվում են «միամտի մը» բազմաթիվ սիրային արկածները։ Առաջին նովելլայում («Ախտին վախը»), հերոսը դեռ սեռապես անփորձ է, նա նոր է, վոր ձեռք է բերում պրակտիկա, հանդիպելով մի անբարոյական կնոջ։ Մյուս որը հերոսը հոգեպես սարսափելի տանջվում է, կարծելով թե սեռական հիվանդություն է ստացել։ Քառասուն որ անընդհատ տանջվում է այդ մտքից։ Նայում է հայելուն սիֆիլիսի նշաններ գտնելու համար։

Յերկրորդ պատմվածքում («Ռուս ուսանողուհին») նկարագրում է ռուս ուսանողուհիների կյանքը և նրանց պարզ ու ընկերական կենցաղը։ Այս նովելլան «Միամտի մը արկածները» գործի ամենահաջողված մասերից մեկն է։

Այնուհետև Հովհաննես Տոհմիկը կապվում է մի պոռնիկի հետ Լոնդոնում և թալանվում վերջինիս կողմից։ Հոլանդական մի քաղաքում կապվում է հասակն առած մի կնոջ հետ, վորն իրեն մայր կասեր։ («Կնկան խաղալիք»)։

Բաղելում ձեռք է գցում 12 տարեկան Մարտային և նրա մորը, բայց հրաժարվում է առաջինից, չհրաժարվելով մորից («Առաջին ճառագայթը»), իսկ մի ուրիշ տեղ յերեք գիշերվա մեջ սեռական կապ է հաստատում յերեք քույրերի հետ։ Նեապոլում հանդիպում է մի լեհուհու, վորը հենց ամուսնության առաջին գիշերը դավաճանում է իր ամուսնուն և հանձնվում Հովհաննես Տոհմիկին («Սրտի հիվանդը»)։ Նիցցայում Հովհաննես Տոհմիկը մերժված սիրուհուց գալիս է հյուրանոց և տեղն ու տեղը տիրում սպասուհուն։ Բազմաթիվ այլ սիրային արկածներից հետո Հովհաննես Տոհմիկը վերադառնում է Պոլիս, ամուսնանում է Հայկանուշ Կոհակյանի հետ և միասին հիմնում են մի առևտրական ընկերություն։ Այսպիսով վերջանում է «Միամտի մը արկածները»։

Ինչպես տեսնում ենք, Զիֆթե-Սարաֆի այս գործի մեջ հիմնականը սեռի պրոբլեմն է, տղամարդու և կնոջ փոխհարաբերության հարցը։ Այդ պրոբլեմի լուծումը նա տվել է բուրժուական գաղափարախոսության տեսանկյունով, սեռի պրոբլեմը դարձնելով կենտրոնական հարց և այդ լուծելով բուրժուական տեսանկյունով։ Զիֆթե-Սարաֆն ուժեղ ազդեցություն է կրել Գրիգոր Զոհրապից։

«Միամտի մը արկածները» գործի «Առաջին ճառագայթը» նովելլայի Մարտայի տիպը իր մի շարք կողմերով Զոհրապի Մագթաղինե տիպի կրկնողությունն է։ Նիցցայում սպասուհու հետ կատարված դեպքը դարձյալ շատ կողմերով հիշեցնում է Զոհրապի նովելլաները։ Վոճի, պատկերների կերտման և տիպերի գործելակերպի մեջ դարձյալ զգացվում է Գրիգոր Զոհրապի ուժեղ ազդեցությունը։ Զիֆթե-Սարաֆը սակայն տարբերվում է Զոհրապից նրանով, վոր առավել ևս խորացրել է սեռի պրոբլեմը, վոր կար Զոհրապի մոտ։ Ինչ խոսք, վոր դրանով Զիֆթե-Սարաֆը գրական գործ չկատարեց գրականության մեջ։ Նա հանդես է գալիս, վորպես նեխված, գրական ճաշակը կորցրած և այլասերված, պարազիտ ռանտե բուրժուազիայի արտահայտիչը գրականության մեջ։ Զիֆթե-Սարաֆն իր «Միամտի մը արկածները» գործով վոչ մի արժեքավոր դեր ունենալ մեզ համար չի կարող։

Գրիգոր Զոհրապն ունեցել է իր հետևորդները։ Դրանց մեջ առաջին տեղը գրավում է Զիֆթե-Սարաֆը։ Բայց և վոչ մեկը չհասավ Զոհրապին և Գրիգոր Զոհրապը նովելլայի ասպարիզում հանդիսանում է չգերազանցված հեղինակ արևմտահայ գրականության մեջ։ Գրիգոր Զոհրապը հանդիսանում է հայ գրականության մեջ կլասիկ նովելլիստ։

3. ՏԻԳՐԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Արևմտահայ գրականության մեջ Տիգրան Կամսարականը հանդես և գալիս վորպես ռեալիստական խոշոր վեպի հորինող։ Դրանով է նա նախ և առաջ տարբերվում իր նախորդներից՝ Ա. Արփիարյանից և Գրիգոր Զոհրապից, վորոնք աշխատել են նովելլայի ասպարեզում։

Տիգրան Կամսարականը ծնվել է Կ. Պոլսում 1866 թվին։ Գրական ասպարեզ է իջել 90-ական թվականների վերջին։ Նա

աղրել ու գործել է գլխավորապես Պոլսում։ Մի շարք տարիներ գործել է Յեգիպտոսում վորպես վաճառական։ Գրական ասպարեզ է իջել վորպես նովելլիստ։ Հայտնի յեն «Հովկուլը», «Հարս» և մի շարք այլ պատմվածքներ, վորոնք սակայն առանձին արժեք չեն ներկայացնում։ Տիգրան Կամսարականի գրական փառքն ապահովեց նրա հայտնի վեպը՝ «Վարժապետին աղջիկը», վորը լույս է տեսել 1888 թվին։ Այդ վեպն ունի խոշոր հասարակական և գրական արժեք։ Շնորհիվ ռեալիստական մեթոդի Տիգրան Կամսարականը կարողացել է մերկացնել առևտրական բուրժուազիայի մի շարք խոցելի կողմերը, առանց սակայն ձեռք տալու այդ դասակարգի հիմքերին։ Նա յերևան է գալիս վորպես բուրժուական մարդասեր։ Սակայն այն չափով, վոր չափով, վոր նա մերկացնում է իր դասակարգին՝ առևտրական բուրժուազիային, Կամսարականը դառնում է մեր գրականության մեջ արժեքավոր և կարևոր դեմքերից մեկը։ Հատկապես բուրժուական յերիտասարդների տիպերը կերտելիս Կամսարականի ստեղծագործական մեթոդը հասնում է քննադատական ռեալիզմի աստիճանին։ Տիգրան Կամսարականն իր այդ վեպը գրել է յերիտասարդ հասակում։ Գրել է այն ժամանակ, յերբ դեռ գրեթե պատանի յեր։ Այդ առթիվ հեղինակը գրում է. «Գրեթե պատանի, հաղիվ քանի մը վեպեր կարդացած, մասնավորապես կես տասնյակ մը գործ Ալֆոնս Դոդեյի, գիշեր մը յերևակայության մեջ ծնունդ առավ «Վարժապետին աղջկան» նյութը»...

Անկասկած այդ վեպը պետք է ունենա իր թերությունները։ Նախ վոր դա նրա առաջին լուրջ գործ է և գրել է յերիտասարդ հասակում, յերբ յեղել է ընդամենը 20 տարեկան։ Չնայած այդ բոլորին, վեպը լույս տեսնելուն պես մեծ ընդունելություն գտավ հասարակության կողմից։ Վեպի շուրջը սկսվեց կրքոտ վեճ։ Յեղան բազմաթիվ իրար ժխտող կարծիքներ։ Միսակ Պատվելին, Կամսարականի նախկին վարժապետը, այդ վեպի մասին շատ վատ կարծիք է հայտնել, վորակելով այդ վորպես մի հասարակ «միտահաճ» (այսինքն՝ նաղլ, պլնգլ)։ Գրաքննիչը շատ մեծ դժվարությամբ է համաձայնել հրատարակելու այդ վեպը։ Նա ասել է.—«Ինչ ատորին ու անպատիվ դեր է, վոր տվել եք Թորոս պեյին, ղղվելի ու լպիրշ շնացող մը։ Յակո մը շիներ եք պեյը. ասիկա ոսմանյան պեյի մը դեմ ամենածանր նախատինք մը չէ, հապա ինչ է, պեյ է պեյ, այլ վոչ միսթեր, սինիյոր կամ մի այլ բան»։ (Թեոդիկ.—«Տարեցույց», 1923 թ. «Գրքի մը պատմություն»)։

Յեվ այդպես, գրաքննիչը սարսափում եր այն մերկացումներից, վոր տալիս եր Կամսարականն իր վեպի մեջ։

Բայց Տիգրան Կամսարականն ունեցել է նաև իր կողմնակիցները, վորոնք մեծարել են «Վարժապետին աղջիկը» վեպի հեղինակին։ Վեպի ընթերցողներից մեկը գրում է. «Իր տիրուհին բաժանվել չուզող հավատարիմ շունին տեսարանը, մինչ նույն պահուն անդգամ ամուսինը զայն կը ձգե ու կփախի վատի մը պես, իրավ վոր վոդիսականն ալ գերազանցեց»։

Տիգրան Կամսարականին իրենց պաշտպանության տակ են վերցնում Հ. Ասատուրը, Շիրվանզադեն և ուրիշները։ Շիրվանզադեն Կամսարականի վեպը համարում է քանքարավոր, իսկ հեղինակին անկեղծ, անկաշառ, վառվռուն հոգու և կրակոտ սրտի տեր մի մարդ։

Տիգրան Կամսարականն ել իր հերթին Շիրվանզադեյին համարում է հանճարեղ գրող։ Հայտնի յե այն փաստը, վոր Շիրվանզադեյին առաջին մասսայականացնողն արևմտահայ գրականության մեջ հանդիսացել է Տ. Կամսարականը, գրելով «Արամբի» վեպի մասին մի ընդարձակ հոդված «Արևելք» թերթի մեջ 1889 թվին, իսկ 1911 թվին Շիրվանզադեյի հոբելյանի առթիվ լույս է տեսնում արևմտահայ գրողների հոդվածների ժողովածուն Տ. Կամսարականի նախաձեռնությամբ և խմբագրությամբ («Շիրվանզադեն և իր գործը»)։

Տ. Կամսարականի և Շիրվանզադեյի մոտիկությունը ցույց է տալիս այդ յերկու հեղինակների աշխարհայացքների և նրանց գրական ստեղծագործական մեթոդների հարազատությունը և կապը։ Յեվ իսկապես, վոր դա այդպես է։ Տիգրան Կամսարականի վեպը շատ է նման Շիրվանզադեյի «Արամբի» վեպին։ «Վարժապետին աղջիկը» մի ընտանեկան դրամա յե, վորտեղ հեղինակը տալիս է այն ժամանակվա բուրժուական հասարակության այլանդակ կողմերի մերկացումը։ Հեղինակը վորպես յենթավերնագիր գրել է. «Պոլսական բարքեր»։ Ուրեմն վեպի նյութը վերցրված է Պոլսի կյանքից։ Գլխավոր հերոսուհին վարժապետի աղջիկն է՝ Աստղիկը, վորն ամուսնանում է հարուստ բանկիր և կալվածատեր Հակոբ եֆենդու վորդի Արամի հետ։ Այդ վերջինը բուրժուական այլասերված յերիտասարդի տիպ է և իր ամբողջ կյանքն անց է կացրել շվայտության ու պոռնկության մեջ։ Կարճ ժամանակից հետո հիասթափվում և զզվում է Աստղիկից, մեղադրում նրան անհավատարմության մեջ և բաժանվում է։ Աստղիկը չկարողանալով տանել այդ անպատվությունը և իր ծնողների

վիշտը, հյուծվում է թոքախտից և մեռնում։ Այդ սյուժետի վրա զարգանում են բազմաթիվ գործողություններ, որոնք ընդհանուր սյուժետի հետ որդանապես կապված են։

Տիգրան Կամսարականը հանդես է գալիս որպես խոշոր ռեալիստական վեպի հորինման վարպետ։ Վեպի կոմպոզիցիան մոնոլիտ է, ունի լարված սյուժետ։ Աստղիկի և Արամի սերը հանդես չի գալիս ինքնանպատակ ձևով։ Այդ յերկու տիպերի մեջ հեղինակը կոնկրետացրել է հասարակական կյանքի յերկու բևեռները՝ մանր բուրժուազիայի տրագիզմը և հղփացած խոշոր բուրժուազիայի ապահով կյանքը։ Այդ յերկու կենտրոնական տիպերի շուրջը համախմբած են այլ պերսոնաժները, որոնցից ամեն մեկն ունի իր կենտրոնական տեղը վեպում։ Հասարակական կյանքի ստորին աստիճանի վրա յեն զանվում կյանքում հալածվածները՝ Անդրանիկ վարժապետն իր ընտանիքով, իսկ կյանքի ընտրյալներն են Հակոբ եֆենդին իր ընտանիքով (Արամը, Զարուհին և ուրիշները)։ Այս վեպի մեջ տրված է յերկու ընտանիքների կյանքը—մեկը՝ Անդրանիկ վարժապետի մանր բուրժուական քայքայվող ընտանիքը, իսկ մյուսը՝ բանկիր Հակոբ եֆենդու այլասերված բուրժուական ընտանիքի կյանքը։ Անդրանիկ վարժապետն իր ընտանիքով զոհ յե դառնում բուրժուական նեխված ընտանիքին։

Տիգրան Կամսարականն այս յերկու ընտանիքների բաղխման մեջ ցույց է տվել այն սոցիալական հակասությունը, որ գոյություն ունի մի կողմից մանր բուրժուազիայի, մյուս կողմից ռևանշական խոշոր բուրժուազիայի միջև։ Գեղարվեստականորեն ամբողջական տիպ է Անդրանիկ վարժապետը։ Նա հանդես է գալիս որպես մանր բուրժուական ինտելիգենցիայի տիպը։ Այդ պերսոնաժը հեղինակը կերտել է յերգիծական ընույթով և հեղինակին այդ հաջողվել է։ Անդրանիկ Ֆանարջյանն իր ընտանիքը պահում է վարժապետությամբ։ Նրա ընտանիքի գոյության պայմանը քրտնաստանջ աշխատանքն է։ Մանր բուրժուազիա ի համար ամենասարսափելի թշնամին՝ դա բուրժուական հասարակության մեջ գոյություն ունեցող գործազրկությունն է, որը մանր բուրժուազիային դատապարտում է ծայրահեղ աղքատության և քայքայման։ Այդ կողմը Տիգրան Կամսարականը կարողացել է տալ խոշոր վարպետությամբ։ Ընթերցողն զգում է գործազրկության հետևանքով ստեղծված սարսափները և այն նյութական զրկանքները, որ կրել է Անդրանիկ Ֆանարջյանի ընտանիքը։ Վախը կյանքի հանդեպ, նյութական անապահով վիճակը ստիպում

են Անդրանիկ Ֆանարջյանին լինելու հլու և հնազանդ հարուստների առաջ։ Յերբ պարահանդեսի ժամանակ ամենակարող ջոջերից մեկը կոխում է նրա վոտը, Անդրանիկ վարժապետն խսկույն ներողություն է խնդրում, չնայած ինքն է յեղել տուժած կողմը։ Այդ պատկերի մեջ յերևան է գալիս մանր բուրժուազիայի՝ վարժապետի, ստորացուցիչ վիճակը։ Իզուր չէ, որ Պարոնյանի կանացի տիպերից մեկն անիծում է իր վորդուն և ասում է՝ «վարժապետ ըլլաս»։

Այս հատու տողի մեջ տրված է վարժապետի դժբախտ վիճակի արտահայտությունը։ Մի այլ որինակ՝ Հակոբ եֆենդին սարսափելի կերպով հաղում է, վորից զիրքը կպչում է վարժապետի քթին։ Հակոբ եֆենդին փոխանակ ներողություն խնդրելու մեծ հաճույք է զգում և սկսում է ծիծաղել Անդրանիկ Ֆանարջյանի վրա, իսկ վերջինս վիրավորված ինքնասիրությունը պահում է լռությամբ։ Դժգոհել չի կարող, վորովհետև խսկույն կզրկվի իր պաշտոնից և ընտանիքը կմատնվի քաղցի։

Հակոբ եֆեդու տանը յեղած տոնախմբության ժամանակ (վորտեղ ներկա յեր նաև Աստղիկը և վորտեղից սկսվում է դրամայի սկիզբը) Անդրանիկ Ֆանարջյանը գրում է բանաստեղծություն՝ նվիրված տոնախմբությանը։ «Զտոնախմբություն» վոտանավորը գրել է, վորպեսզի իր աշակերտներն արտասանեն տոնախմբության ժամանակ։ Արամն այդ բանաստեղծության տեսքը կախում է կատվի վզից և չբավականանալով դրանով՝ ծաղրանքի յենթարկում Անդրանիկ Ֆանարջյանին։ Վեպի այս մասը Տիգրան Կամսարականը պատկերել է մեծ վարպետությամբ և հուզականությամբ։ Մի կողմում Աստղիկը շրջապատված «վոսկե» յերիտասարդությամբ, իսկ մյուս կողմում՝ նրա ծերունի արհամարհված հայրը։ Ակամա հիշում ես Պուշկինի «Փոստակայանի հսկիչը» հայտնի պատմվածքը, վորտեղ ճիշտ նույն ձևով տրված է վերոհիշյալ պատկերը։ Աստղիկը ցածր խավից է, բայց շնորհիվ իր արտակարգ գեղեցկության, ստիպում է վոր իրենով հիանան հարուստ յերիտասարդները։ Արամը պարահանդեսի ժամանակ սիրահարվում է Աստղիկի վրա, իսկ մի քանի որից հետո հայտնում է աղջկա ծնողներին և հետո ամուսնանում Աստղիկի հետ։

Վեպի այդ մասը թույլ է, վորովհետև անհամոզեցուցիչ է։ Աստղիկի պարահանդես գալը կրում է պատահական ընույթ։ Այստեղից և սկսվում է վեպի հանգույցը։ Զլիներ այդ, չեր լինի և սյուժետի զարգացումը։ Դա վեպի առաջին և հիմնական թերությունն է։ Յերկրորդ կարևոր թերությունը՝ դա Արամի հոգեկան

հանկարծակի փոխանցումներն են, վոր նույնպես համոզեցուցիչ չեն։ Արամը միանգամից սիրահարվում է Աստղիկի վրա, նա վոչ վոքի չի լսում և ամուսնանում է նրա հետ։ Սա ևս խելքին մոտիկ բան չե։ Այդ կողմը չի կարող բնորոշ լինել Արամի նման քայքայված տիպի համար։ Չնայած այդ թերության, Տիգրան Կամսարականը հաջողությամբ կարողացել է կերտել բուրժուական քայքայված յերիտասարդի՝ Արամի տիպը։

Կամսարականի ռեալիզմն այստեղ հասնում է քննադատական ռեալիզմի աստիճանին։ Կամսարականն Արամի միջոցով կարողացել է տալ բուրժուական յերիտասարդի բնավորության բնորոշ գծերը։ Արամը կյանքի իմաստը գտնում է քեֆի, խմելու, փող մսխելու և կանանց մեջ։ Սերային իր արշավանքներում մի յերկու անգամ սկանդալի մեջ է ընկել սեռական սանձարձակության հետևանքով։ Նա ընկել է մի տեսակ սեռական նիրվանայի մեջ։ Նա իր հոգևոր հայր Թորոս պեյին ասում է. «Ալ ձանձրացած եմ, պեյ, զզված եմ, կհասկնաս, վերջերս գրեթե հաճույք չեյի զգար իրմե,—խոսքը Պերենիս դերասանուհու մասին է,—կգվե դիս իբր թե յես ըլլայի կինը և ինքը մարդը»։ («Վարժապետին աղջիկը», եջ 132)։ Արամը յերևան է գալիս վորպես անգործունյա, սնամեջ բուրժուական յերիտասարդի բնորոշ տիպը։ Նա դատարկ կարաս է, բայց հասարակության մեջ հարգանք է վայելում, վորովհետև բանկիրի զավակ է և չափազանց հարուստ։

Բուրժուական յերիտասարդի ռեալիստական տիպ է և Թորոս պեյը, Արամի դաստիարակը պառնկության մեջ։ Նա նենգավոր է և խարդախ։ Նա հետապնդում է իր ընկերոջ (Արամի) կնոջը, իսկ յերբ չի կարողանում տիրել Աստղիկին, սկսում է զրպարտել նրան։

Թորոս պեյը կապվում է Արամի քրոջ հետ, և գողանալով ահագին փող փախչում են Պոլսից։

Տիգրան Կամսարականին հատկապես հաջողվում է բացասական տիպերի կերտումը և ավելի թույլ է, յերբ տալիս է դրական տիպերը։ Այդ հատկապես յերևում է վեպի գլխավոր հերոսուհու պատկերումից։ Աստղիկը հանդես է գալիս վորպես իդեալական աղջիկ։ Հեղինակը վոչինչ չի խնայել նրան գեղեցիկ պատկերելու համար։ Աստղիկը բնության կատարելությունն է, վորին կարելի յե համեմատել միայն հունական քանդակների հետ, ինչպես ասում է Կամսարականը։ Աստղիկի արտաքինի նկարագիրը տալիս է ռոմանտիզմին բնորոշ համեմատություններով։ Որինակ. «Հրաշալի գունագեղություն ուներ Աստղիկը. յուր սիրուն բեբանը, բոսորագեղ շրթերը, մարգարտաշար ատամունքը, գլխուն շնորհալի ձևն, հավերժահարսի բարձր և բարեձև հասակն իդեալին կվերաբերեյին»։ Բայց միայն արտաքինը չեր շնորհալի, Աստղիկը նաև խելոք եր, կիրթ և զարգացած։ Նա կարդում է Ալֆոնս Դոդեն և այլ հեղինակներ։ Մի խոսքով նա վոչ մի թերի կողմ չունի։ Հեղինակը վոչ մի գույն չի խնայել հերոսուհուն գեղեցիկ նկարագրելու համար։ Դրա համար ել Աստղիկն այնպիսի գեղարվեստական ամբողջական տիպի աստիճանին չի հասել, ինչպես Արամը, Թորոս պեյը կամ Անդրանիկ Ֆանարջյանը։ Աստղիկը մի քանի գծերով հիշեցնում է Ֆլոբերի մադամ Բովարուն։

Յերկու հերոսուհիներն ել դժգոհ են այն իրականությունից, վորի մեջ ապրել և մեծացել են։ Քաղքենիական տարտամ միջավայրը խեղդում է յերկուսին ել։ Յեվ Բովարին և Աստղիկը զարգացած են, նրանք կարդացել են շատ գրքեր և փնտրում են ավելի իմաստալից կյանք, ձգտում են ավելի լայն հորիզոններին։ Յերկուսն ել այդ կյանքը տեսնում են բարձր խավի մարդկանց մոտ։ Բովարին դավաճանում է ամուսնուն և կապվում այդ խավի մարդկանց հետ, իսկ Աստղիկը խուսափում է ամուսնանալ Գարեգնի հետ, վորը մի միջակ վաճառական է և իսկույն նեսվում է Արամի գիրկը։ Վերջինիս քայլվածքի, իրեն պահելու մշակված ժեստերի մեջ Աստղիկը տեսնում է իր իդեալի կենսագործումը։

Բովարին և Աստղիկը ձգտում են զուրս գալ խեղդող ճահճից, Բովարին՝ պրովինցիայից իսկ Աստղիկը Պոլսի արվարձաններից։ Բովարին հիանում է, յերբ պատահաբար ընկնում է քաղաք և տեսնում է ներկայացում. յերազում միշտ պատկերացնում է ներկայացումներ, իսկ Աստղիկը հիանում է Բերայի փողոցով և այն փարթամ կյանքով, վորը գոյություն ունի Արամենց տանը։

Յերկու հերոսուհիներն ել մանր բուրժուական խավից են և յերկուսն ել զոհ յեն գնում բարձր խավին։ Ինչպես տեսնում ենք, Բովարիի և Աստղիկի միջև շատ նմանություններ կան, նրանք միայն տարբերվում են նրանով, վոր Բովարին ակտիվ է գործունեության մեջ, իսկ Աստղիկը պասսիվ է և չի ընդդիմադրում չարիքին։ Տիգրան Կամսարականը շնորհիվ իր մեթոդին՝ քննադատական ռեալիզմին կարողացել է մերկացնել բուրժուական հասարակության այն գործոնները, վորոնք պայմանավորեցին Աստղիկի կործանումը։ Բուրժուական այլասերված յերիտասարդների՝ Արամի և Թորոս պեյի տիպերի հաջող պատկերման հետ մեկ տեղ հեղինակը տալիս է նաև դատաստանական խորհրդի, պատրիարքարանի և ծախու մամուլի կեղծիքի մերկացումը։ Բոլորն

անցնում են Արամի կողմը, վորովհետև նա հարուստ է, և բոլորն էլ դատապարտում են Աստղիկին, վորովհետև նա աղքատ է և չի կարող նրանց կաշառք խոստանալ։

Խմբագիրն սկսում է անընդհատ զրպարտել Աստղիկին, վորպեսզի հետաքրքրություն զարթեցնի ընթերցողների մեջ և դրանով տարածի իր թերթը.—«Բայց ուրիշ թերթ մը գոհացած չեր բնավ յերկու տողերով»։ «Շարունակելիով» կը հրապարակեր դիցաբանական կատակերգություն մը և «թերթը յերեք հարյուր որինակ ավելի կվաճառվեր», ինչպես կը գրեր խմբագիրը։ («Վարժապետին աղջիկը», եջ 307)։ Յեվ վորպեսզի թերթը դադարի Աստղիկին զրպարտելուց, խմբագիրն Անդրանիկ Ֆանարջյանից պահանջում է յերկու վոսկի, իսկ Արամի «սխրագործությունների» մասին թերթերը վոչինչ չեն գրում, վորովհետև «հարուստ է և ամեն ինչ կներեն հարուստին, լրագրերը կաշառվեցան այդ յերկու անցքերը գրելու համար»։

Հայոց պատրիարքը նույնպես փառաբանում է հարուստ Հակոբ եֆենդուն, իսկ Արամի մասին բացականչում է. «հարազատ վորդի զնմանություն հորն բերե»։ Դատական խորհուրդը նույնպես կաշառված է և անցնում է Արամի կողմը։ Տիգրան Կամսարականը փայլուն կերպով տալիս է դատաստանական խորհրդի մերկացումը. «Ատույգ է, վոր դատաստանական խորհուրդ չէ այդ, այլ հավատաքննության ատյան, արդարության տեղն՝ անիրավություն, որենքի տեղ կիրք կա հոն, դատավորի տեղ՝ զրպարտիչ»։

Դատաստանական խորհրդի այդպիսի մերկացումը հիշեցնում է Պարոնյանի «Բաղդասար ախպարը» ստեղծագործության այն տեղը, վորտեղ մեծագույն յերգիծաբանը տալիս է դատաստանական խորհրդի վոչնչացնող ծաղրը։

Դատաստանական խորհրդի անդամ է նաև Գարեգին Արսենյանը, վորին մերժել է Աստղիկը, բայց վորին դեռ շարունակում է սիրել Գարեգինը։ Այդ տիպի մեջ հեղինակը ցանկացել է պատկերել վաճառականի դրական տիպ, հակառակ բացասական տիպին (Նահապետյան)։ Այս ևս ցույց է տալիս, վոր Տիգրան Կամսարականը չի ժխտում առևտրական բուրժուազիային, նա բուրժուական մարդասիրության սահմաններից դենը չի անցնում։ Նա տեսնում է միայն չար և բարի մարդիկ, բացասական վաճառականի (Նահապետյանի) կողքին նա տեսնում է դրական վաճառականին (Գարեգին Արսենյան)։

Գարեգին Արսենյանն ոժտված է մարդկային բնավորության

բոլոր լավագույն գծերով։ Նա ապրում է հոգեկան տրագեդիա, վորովհետև պետք է հանդիսանա իր սիրածի դատավորը և համոզված է, վոր Աստղիկին մեղադրելու յեն, չնայած վոր անմեղ է։ Դրությունից յելնելու համար նա հրաժարվում է իր պաշտոնից, բայց հետո նորից նստում իր տեղը հույս ունենալով, վոր գուցե հնարավոր լինի ազատել Աստղիկին ամբաստանությունից։

Գարեգնի այդ հոգեվիճակը տրված է հաջող՝ պատկերները ռեալիստական են և հիշեցնում են Նեխլյուդովի հոգեվիճակը (Տոլստոյի «Հարություն» վեպից)։ Վեպի կենտրոնական խնդիրը հանդիսանում է կնոջ եմանսիպացիայի խնդիրը։ Սակայն, ինչպես արդեն ասացինք, Տիգրան Կամսարականն այդ հարցը լուծում է բուրժուական մարդասիրության սահմաններում։ Նա կնոջ տնտեսական անկախության խնդիրը չի դնում, այսինքն կնոջը վերջնականապես չի ազատում տղամարդու բռնությունից։ Տիգրան Կամսարականը դնում է կնոջ իրավական ազատության խնդիրը, այսինքն հիմնականը նրա վեպի մեջ ապահարզանի խնդիրն է, այն, վոր կինն իրավունք ունի անջատվելու բռնակալ ամուսնուց։ Կնոջ խնդրի այդպիսի լուծումը և հիմնականը դարձնելով ապահարզանի խնդիրը՝ այս յերկու կողմերով Տիգրան Կամսարականի վեպը չափազանց հիշեցնում է Շիրվանզադեյի «Արամի» վեպը։ Ստեղծագործության այդ հարազատությամբ և պայմանավորված վերոհիշյալ հեղինակների չափազանց դրական վերաբերմունքն իրար հանդեպ։

Տիգրան Կամսարականը լեզվի, պատկերների կերտման և հումորի վարպետ է։ Որինակ՝ «Հեռուն ոձապտույտ կայծակները հորիզոնը կլուսավորեյին»։

Հումորից մի որինակ։ Ուսուցիչը հարց է տալիս, թե աշակերտներն ինչի մասին պետք է նամակ գրեն։ Աշակերտները պատասխանում են, թե պետք է գրեն նամակ, վորի մեջ «Իզմիրեն բարեկամի մը պիտի խնդրենք, վոր պանիր ղրկե մեզ»։ Այստեղ ծաղրված է դասավանդության սխոլաստիկ մեթոդը և աշակերտների ցածր կուլտուրական աստիճանը։ Հատկապես հաջող է գծված Անդրանիկ Ֆանարջյանի հումորական տիպը։

Աստղիկը մենակ նստած է այգում լքված իր ամուսնուց։ Պատահաբար նրան հանդիպում է Արամը, վորն իսկույն խույս է տալիս, մինչդեռ շունը տեսնելով իր նախկին տիրուհուն, փաթաթվում է նրա վոտներին։ Սա վեպի ամենազեղեցիկ պատկերներից մեկն է և ցույց է տալիս հեղինակի վարպետությունը հուզիչ պատկերներ ստեղծելու մեջ։

Բայց վեպի հիմնական արժեքը, դա իրականության քննադատական վերարտադրության մեջ է։ Հատկապես հաջող է այն մասը, որտեղ տրված է ապահարզանի և դատավարության նկարագիրը։

Տիգրան Կամսարականը սուր կերպով ծաղրում է բուրժուական ծախու լրագրերը, դպրոցի սխոլաստիկ մեթոդը, խմբագիրներին, բանաստեղծների և իրավաբանների ստորաքարշությունները։ Այս ամենը հիշեցնում են Պարոնյանին, հատկապես նրա «Մեծապատիվ մուրացկանները» ստեղծագործությունը։ Այդ ամենը Տիգրան Կամսարականը չի տվել վոչնչացնող սարկազմով, այլ տվել է հումորի միջոցով, թերությունները վերացնելու նպատակով։

Տիգրան Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպի արժեքը քննադատական ռեալիզմի մեջ է, տիրող հասարակական խավերի ստոր գործերի, բուրժուական յերիտասարդության այլասերված կողմերի մերկացման մեջ է։

Տիգրան Կամսարականն իր այդ վեպով հանդիսանում է արևմտահայ ռեալիստական արձակի ամենաբնորոշ և ամենակարևոր դեմքերից մեկը։ Տիգրան Կամսարականն արևմտահայ ռեալիստական արձակի մեջ հանդիսանում է վորպես ռեալիստական վեպի խոշոր վարպետը։

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Ար. Արփիարյան «Նորավեպիկներ»։
2. Գր. Զոհրապ «Կյանքն ինչպես վոր է»։
3. Տիգ. Կամսարական «Վարժապետին աղջիկը»։

ՈԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խմբագրությամբ Տ. Կամսարականի «Շիրվանզադեն և իր գործը» հոդվածների ժողովածու։
2. Գր. Զոհրապ «Լուռ ցավեր» և «Խղճմտանքի ձայներ»։
3. Զիֆթե-Սարաֆ «Միամտի մը արկածները»։
4. Մոպասան «Ճարպագունդ»։
5. Եմիլ Զոլա «Նանա»։
6. Շիրվանզադե «Արամբի»։

ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ ՅԵՎ ՅՈՒՅՑՄՈՒՆՔՆԵՐ

1. Արևմտահայ իրականության մեջ ինչպիսի՞ տիրող հասարակական խավեր կային, յերբ հանդես յեկան արևմտահայ ռեալիստները (ամիրաները և խոշոր առևտրական բուրժուազիան)։

Դրա համար կարդալ առաջադրության առաջին մասը։

2. Արևմտահայ իրականության մեջ մանր բուրժուազիան՝ «եսնաֆ» խավը ինչ դրություն եր ապրում, յերբ հանդես յեկան Արփիարյանը, Զոհրապը և Կամսարականը։

3. Արևմտահայ ռեալիստական արձակը վորպես բուրժուազիայի գրական ուղղությունը և այդ գրականության բնորոշ դեմքերը։

4. Ար. Արփիարյանը վորպես նովելլիստական գրականության մեջ ռեալիզմի սկզբնավորողը։ Կարդալ «Նորավեպիկներ»։

5. Ի՞նչ հիմնական խնդիրներ և դնում Արփիարյանն իր նովելլաններում և ինչպիսի լուծում է տալիս դրանց։

6. Ցույց տալ Արփիարյանի աշխարհայացքի կապը Գրիգոր Արծրունու հետ։

7. Արփիարյանի գրած պատմվածքներն արհեստավորների կյանքից («Խնդամոլիկ աղջիկը»)։

8. Ի՞նչ նման կողմեր կան Արփիարյանի «Կարմիր ժամուց» և Բաֆֆու «Զալալեդդին» ստեղծագործությունների մեջ (համեմատել տեր-Հուսիկը Դալի-Բաբայի հետ)։

9. Արփիարյանի ազդեցությունը հետագա նովելլիստների վրա (Գ. Զոհրապ)։

10. Գր. Զոհրապի կլասիկ նովելլիստ լինելու ինչ ցուցանիշներ կան։

11. Գրականությունը ժողովրդի կյանքի հայելու՝ Զոհրապի սկզբունքի հաջող կիրառումը մի շարք պատմվածքներում (կարդալ «Փոստալ» և «Ճիտին պարտքը» նովելլանները)։

12. Զոհրապի նովելլաների մեջ վորն է հիմնական թեմատիկան (սեռի պրոբլեմը և այդ խնդրի բուրժուական մեկնաբանումը)։

13. Զոհրապն ինչպիսի ազդեցություն է կրել յեվրոպական գրականությունից (համեմատել «Փոստալը» Մոպասանի «Ճարպագունդ» պատմվածքի հետ)։

14. Ի՞նչ ազդեցություն է թողել Զոհրապը հետագա նովելլիստների վրա (Զիֆթե-Սարաֆը և իր «Միամտի մը արկածները» նովելլաների ժողովածուն)։

15. Տիգրան Կամսարականը վորպես ռեալիստական խոշոր վեպի սկզբնավորող արևմտահայ գրականության մեջ։

16. Ի՞նչով բացատրել այն փոխադարձ համակրանքը, վոր կար Կամսարականի և Շիրվանզադեյի միջև։

17. Համեմատել «Վարժապետին աղջիկը» վեպը Շիրվանզադեյի «Արամբի» վեպի հետ։

18. Ի՞նչ դեպքում է Կամսարականի ռեալիզմը հասնում քննադատական ռեալիզմի աստիճանին։

19. Ի՞նչպես է տվել բուրժուական յերիտասարդի տիպերը (Արամ և Թորոս պեյը)։

Գրավոր ռեֆերատի ձևով պատասխանել այս խնդիրներին.

ա) Կնոջ խնդիրն Արփիարյանի նովելներում,

բ) Զոհրապի սկզբունքը—գրականությունը վորպես ժողովրդի կյանքի հայելի և այդ սկզբունքի հաջող կիրառումը մի շարք պատմվածքներում («Փոստալ», «Այրին», «Ճիտին պարտքը»)։

ՀԱՍՀ ԳԱ Գրականության Գլխ. Գրադարան
ՀԱՍՀ-ԱԳԱ ԳՍՐ
Ս. Գր. Ա. Մասիսյանի Մասնագիտական անվան

Խմբագրող Գ. ԱՍԴՐԵԱՍՅԱՆ Սրբագրող Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Сдано в набор 13/III-1939 г.
Разрешено к печати 28/IV-1939 г.
3 печ. л. 146.400 тип. зн.

Главлит № 1902. Заказ № 708. Тираж 2000.
Типография „Красный Восток". Баку, ул. Юного пионера, 84.

457

Институт повышения квалификации и заочного педобразования

Гурген Антонян

ЗАПАДНОАРМЯНСКАЯ РЕАЛИСТИЧЕСКАЯ ПРОЗА

(на правах рукописи)

Издание Наркомпроса АзССР
Баку—1939.

«Ազգային գրադարան»
NL0379277

63.050